

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆՐԱՅԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

Կ. Պոլսոյ թերթերը աչքէ անցընելու պատեհութիւնը երբ կ'ունենանք, կը տեսնենք թէ Ազգային Հիւանդանոցնիս, եւ ուրիշ բարեգործական հաստատութիւններ հանրային մտազբաղումին մէջ մեծակ տեղ մը կը գրաւեն: Մենք ալ արտասահման գտնուելով հանդերձ երբեք չենք ուզեր մեր ուշադրութենէն վրիպել անդին մեր հոգին վրայ ապրող ազգային կեանքին երեւոյթները: Մենք ալ այդ հիւանդանոցին եւ ուրիշ ազգային բարեսիրական հիմնարկութեանց շուրջը շատ կը պտըտինք: Չեն պակսիր հայեր որոնք մեզի կը հրաւիրեն թող տալ որ Պոլսեցիները զբաղին ընթացիկ գործերով, ու մենք մեր բոլոր մտածութիւնը նուիրենք մեր ազատագրութեան դատին:

Մենք այս հրաւեր չլսելու կը զարնենք: Ժողովրդի մը հանրային կեանքը միայն և սիմիայն մէկ հիմնաքարի վրայ կառուցուած չէնք մը չէ: Պատմութիւնը ստեղծած է այլ կեանքը որ կը պահպանուի, կը շարունակուի, կը զարգանայ բազմատեսակ պայմաններով: Օրինակ անոնք մեծ ազգերէն: Ահա կը տեսնենք պետութիւն մը, օրինակ Ֆրանսան, որ իր հանրային կեանքին համար ամենամեծ ծախքերու գուռ բացած է: Ժողովուրդը շարաշար կը տառապի հարկերու ներքեւ: Երբ Խորհրդարանը ամէն տարի յաջորդ շրջանին ելմտացոյցը կը քուտարկէ, ոչ ոք կը մտաբերէ առաջարկել ջնջումը կարգ մը ծախքերու օրոնք ու եւ է անմիջական կարեւորութիւն մը ունենալ չեն թուիր: Այսպէս, երբ ցամաքային ու ծովային զօրութիւնները ուժեղ պահելու համար Ֆրանսա ու եւ է զոհողութեան առջեւ տեղի չի տար, միևնոյն ատեն մտքէն չ'անցընելու հանրային կրթութեան յատկացումը գումարը նուազեցնել: Ու մինչ պետութիւնը անողոքելի հաստատամտութեամբ կը շարունակէ պահել ու պահպանել ընդհանրական ելմտացոյցը, անդին թաղապետութիւններն ալ չեն սուզեր իրենց ծախսերէ բան մը պակսեցնել: ու խստութեամբ կը գանձեն քաղցին պէտքերուն յատկացում տուրքերը: Ո՞րն է ան թաղա-

պետութիւնը որ քսէ թէ՛ «բաւական համարինք փողոցներուն լուսավառութիւնը, մաքրութիւնը, ջուրի բաշխումը, որովհետեւ ժողովուրդը իր օրուան կեանքին անհրաժեշտ պէտքերուն համար ստակ ունի միայն: Իսկ հիւանդանոց, որբանոց, ընկեցիկ մանուկներու ապաստանարան, հանրային նպաստի տուններ, ամէնքն ալ գոցենք: Թո՛ղ մեռելները իրենք թաղեն իրենց մեռելները:»

Հանրային կեանքը կը նմանի մարմնին, որուն ամբողջութիւնը կազմող մասերէն ոչ մէկը անպէտ կը համարուի, ու անդամներէն մէկուն տկարացումը ամբողջին առողջութիւնը կը խանգարէ: Անոնք որ մեր մէջ կը կարծեն թէ մեր բոլոր հոգածութիւնը պէտք է նուիրենք բարեգործական հիմնարկութեանց, իսկ ազգային ազատագրութեան գաղափարը պէտք է մոռնանք, անոնք այնքան շարաշար կը սխալին որքան օստակապէս կը խաբուին այս կարծիքին հակառակ պնդողները, երբ կուզեն ազգին ամբողջ ուշադրութիւնը մարտնչումի կէտի մը վրայ միայն կեդրոնացնել:

Մտքերնուս առջեւ բերենք մեր ազգային կեանքին վերջին տարիներու երևոյթները, եւ պիտի անդրադառնանք թէ ո՛չ դպրոցը Հիւանդանոցին բարեկարգութեանը արգելք կ'ըլլայ, ո՛չ ալ հիւանդանոցը կը վնասէ Ազգային ազատագրութեան դատին:

Հայաստանի մտաւորական զարգացմանը առաջադրութեամբ Պոլիս հաստատուած ընկերութիւններու հիմնարկութեան թուականը կը զուգարդիպի այն օրուան ուր Հայկական խնդիրը Էւրոպայի մեծ հարցերուն օրակարգը կ'անցնէր պաշտօնապէս: Կ. Պոլսոյ Հայերը իրենց էն նշանաւոր վարժարանը երբ ունեցան. 1885-95ին: Այդ տասը տարուան շրջանը, որ մեր կեդրոնական վարժարանին բարգաւաճման թուականն է, պիտի մնայ մեր կրթական պատմութեան էն սրտապնդող եւ փառաւոր մէկ դրուագը: Եւ օսական ճիշդ այդ աշխարհական կրթութեան ուռճացումի ատենն էր որ Արմաշի կղերանոցը կը հաստատուէր: Հիւանդանոցին տնտեսական վիճակը բարւոյցուած պահուն էր որ ալ պարտապահանջները ավելին անոնք Պատրիարքարանին գուռը, ամէն ծախս կանոնաւորապէս վճարուելով: Ու միևնոյն ատենն էր որ մեր դպրոցներուն նիւթական կացութիւնը զգալապէս կը բարեփոխուէր:

Հիւանդանոցին ներքին բարեկարգութեան խնդիրը երբ սկսաւ յուզուիլ ազգին մէջ: Տասը տարիէ ի վեր է որ ազգին մէկ քանի հարուստները կը վարէին այդ հաստատութիւնը: Իրենց մատակարարութիւնը խղճամիտ անտեսութիւն էր, իսկ բոլորովին անկարող եղած էին հիւանդներու խնամակալութիւնը ապահովելու մէջ: Ո՛չ ոք ձայն մը հանելու համարձակութիւնը կունենար: Յեղաշրջումի առաջին նշանը կը տրուէր 1890 յուլիս 15ին: Յաջորդ օրը Հիւանդանոցին ներքին վիճակին բարուցման պահանջուովը ազգային խնդիրներուն օրակարգը կ'անցնէր: Ոչ Պոլիս միկնոյն թերթերն էին, միկնոյն գործողները որ թէ՛ Հայաստանի բարենորոգումներու, ու թէ՛ մեր ներքին վերանորոգումի դատերը հաւատարմապէս կը պաշտպանէին:

Մեր ներքին բոլոր խնդիրները՝ եկեղեցական, կըրթական, բարեգործական, ընկերական, Կ. Պոլսոյ մասուլիսն միջոցաւ ահեղապէս տակնուվրայ ըրին յողովուրդը 1893—95 թուականին. ճիշտ այն ժամերուն ալ ազատագրութեան սարսուռը կը վազվառէր հայուն ոսկորներուն մէջ:

Ու եկան թախծութեան օրերը: Լքուեցան Կեղերունական եւ Դպրեվանքը, խանգարուեցաւ ամէն հաստատութեանց ելմտական վիճակը: Պոլսոյ մասուլիսը իր լեզունը քաշեց: Միկնոյն ատեն տկարացաւ ազգային ազատագրութեան դատին շերտնանդ պաշտպանութիւնը:

Հիմակ ամէն ուրեք տարօրինակ հոգածութիւն մը ցոյց կը տրուի մեր որբերուն, մեր հիւանդներուն համար, ու մեր տղոց կրթութեան խնդիրը մեր մտահոգութեանց մէջ առաջնակարգ տեղ մը կը գրաւէ: Եւ ահա ազգը կը սկսի զուլթը վեր առնել. իր շուարսւմը անցած կը թուի. «Ինչ պիտի ընենք, ընտո՞ր պիտի ապահովենք ազգային դատին փրկութիւնը» կը հարցուի անձկութեամբ ամէն կողմէ: Ընդհատուած գործ մը վերսկսելու և շարունակելու ըղձանքը ակններէ է:

Անգամ մը եւս կը հաստատուի թէ մեր տոհմային կեանքը իր բազմազան պայմաններովը, եւ մեր ազատագրութեան դատը իր զանազան պահանջումներովը, միշտ սերտ համերաշխութեան մէջ են:

Խտրութիւն չդնենք ազգին զտնազան պէտքերուն միջև: Հոգ չէ—կամ թէ՛ հարկ իսկ է—բաժնուի ենք խումբերու, ինչպէս միշտ բաժնուած ենք: Կրթասէր խումբն ու նենանք, ու ազատութեան դատին նուիրուած խումբը, հիւանդախնամ ու որբապահական խումբերը, գրական խումբն ու եկեղեցական խումբը: Ամէնքն ալ զատ զատ ջուկատներ են, որոնց լրութիւնը բանակը կը կազմէ:

Ահա այդ բանակն է որ իր ամբողջութեանը մէջ ներգաշնակ, պիտի պաշտպանէ, պիտի պահպանէ, պիտի փրկէ հայ ազգութիւնը:

Ո՛չ մէկ ջոկատին կարևորութիւնը միտենք:

ՖՐԱՆՍԱ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Մօտերս Բարիզ հրատարակուելիք գրքի մը, Պ. Լ. տը Գոնդանսոնի Գրիստոնէայ ոչ Մահմետականին առթիւ՝ որուն վրայ առիթ պիտի ունենանք խօսելու, ֆրանսացի ծանօթ գրագէտ ու գործիչ Պ. Ժիւլ Լըմէյըրը յօդուած մը կը նուիրէ հայկական հարցին:

...«Երեք հարիւր հազար զժբազդ մէկ քանի ամուսան մէջ ջարդուեցան իրենց վեհապետին հրամանովը կամ թոյլտուութեամբը. քաղաքակիրթ կոչուած Եւրոպան թող տուաւ ատիկա. կայսր մը որ Աւետարանը բերնէն չի ձգեր՝ ատոր վրայ ինքզինքը զարհուրելի մարդասպանին բարեկամը հոչակեց. ահա՛ իրողութիւններ որոնք ճշմարիտ են, եւ օակայն զժուարաւ կը սղմին մարդուս զլիսուն մէջ: Փրանսական Յեղափոխութենէն հարիւր տարի ետքը, Անիթաւութիւնը և Բոնութիւնը ամէն ատենէ աւելի աշխարհիս տէրն են:

«Ա՛հ, վեհապետներուն եւ կառավարութեանց վատութիւնը: Չգիտցան, չուզեցին արգիլել տարապայման եղեներ. բայց այն մասնաւոր ամօթալի գործերը որոնցմով զբաղած են, իրենց նոյն իսկ թոյլ չեն տար արգիլելու եղեներն կրկնուած, Պերլինի դաշնագրին 61րդ յօդուածին կամ Փրանսայի, Ռուսիոյ եւ Անգլիոյ դեսպաններուն պատրաստած 1895 հոկտեմբեր 20ի բարենորոգմանց ծրագրին գործադրութիւնը պահանջելով:

«Բացորոշ, զիւանագիտական պաշտօնագրեր են ասոնք, որ ամէնէն հանդիտաւոր ստորագրութիւնները կը կրեն, եւ որոնց գործադրութիւնը եւրոպական պետութեանց պատուին ու արժանապատուութեան հետ կապ ունի:

«Արդ, Հայերը—զորոնք թիւրքերը կը ճգմեն, Գիւրտերը կը կողոպտեն, ու մերթ ընդ մերթ երկուքը մէկտեղ կը ջարդեն—կը սպասեն միշտ... Ու կարմիր սուլթանք Եւրոպայի քթին կը խնդայ, և, խորամանկ ու վայրագ, մարդկութեան կը զիմազրաւէ:

«Աւա՛ղ, այսօր Փրանսայի մէջ ո՞վ Հայերով կ'ըզբաղի դեռ: Ոչ ոք: բացի կրօնաւորէ մը և մէկ քանի համազգայնականներէ:

«Մէկ կողմէ, Հ. Շարմըղանը կայ, «Արեւելի վարժարաններու հաստատութեան» տնօրէնը: Բայց իր ամսագիրը կաթոլիկներու օահմանափակ հասարակութեան մը միայն կ'ուղղուի:

«Միւս կողմէ, Պ. Պ. Գլէմանսօ, Փրանս, Ժուէօ, տը Բրէտանսէ և տը Ռոպէրդի Բրօ Արմենիա անուն հանդէս մը հիմնած են: Ատիկա անշուշտ պատիւ կը բերէ իրենց: Բայց գիտենք թէ այդ պարոնները բացէ ի բաց թշնամի են զինուորական կարգաւարքին, որուն տեղը

դնել կ'ուզեն մեղսօրէն ժարգուած երկրապահ քաղաքացիներու բանակ մը: Արդ, ինչ պիտի արժէ Պրանսոյի միջամտութիւնը ինպատ չայերուն, եթէ իր զիւանազիտական փաստերն ու խորհուրդները չկրնայ կրթնցնել զինուորական մեծ ոյժի մը:

«Ամբողջ Պրանսան իրար անցնելու էր այդ այնքան շահեկան ժողովրդին համար, որ, եւրոպական ամէնէն բարձր ստորագրութեանց հաւատացած, կը մարտնչի, յանուն ազատութեան, ընդդէմ օսմանեան կայսերականութեան, ինչպէս թրանսվալի Պոէրները ընդդէմ անգլիական կայսերականութեան:

«Բայց, իր կառավարութեան տակ ճգնուած ու նշուատացած, Պրանսա, որ այնքան կոռուած է ժողովուրդներուն ազատութեանը համար, բան մը չի կրնար ընել ո՛չ Պոէրներուն ո՛չ չայերուն համար:

«Ոչ մէկ ատեն այնքան խօսուած է բարոյականի, արդարութեան, մարդկութեան մասին: Եւ սակայն Պատմութեան անբարոյականութիւնը երթալով կ'աճի: Կարծես թէ աշխարհի մէջ արդարութեան յառաջդիմութիւնը այսօր նահանջած է սա նոր թշնամիին առջեւ, — միջազգային սեղանաւորութիւնը:

«Եթէ 1894-96ի շարժերուն ատեն չայոց ձայնը խեղդուեցաւ, և դեռ այսօր ալ կը խեղդուի, պատճառը ան է որ աշխարհաքաղաքացի մեծ սեղանաւորութիւնը, որ տիրաբար հաստատուած է Կ. Պոլիս, շուգեր որ իր գործառնութիւնները խանգարուին:

«Իրա՛ւ ա՛յնչափ տկար ենք որ կարող չենք նոյն իսկ ձայներնիս բարձրացնել և իր պարտականութիւնը յիշեցնել «քրիստոնեայ» Եւրոպայի, «քաղաքակիրթ» Եւրոպային: Ինչ ցաւ է տեսնել Պրանսան որ, առաջին անգամը ըլլալով. կը թերանայ իր մարդկային պաշտօնին մէջ:»

ԱՐՅՈՒՆՔՈՏ ՀԱՅՑ

Ը.

«Հետեւեալ առտուն, կը պատմէ հեղինակը, արեւը վառ ու պայծառ կը փայլէր, իբր թէ անհամար Հայերու կոտորածը խրախուսելիք բան մը ըլլաւ: Սըվազի շուրջը գոնազող քիւրտ ու թիւրք գուգազին (անկիրթ զօրք) նոր կորով մը տուաւ իրենց ահօնի գործը առաջ տանելու: Կանոնաւոր զօրքերը իրենց սուրհմներուն ծայրերը կը սրցնէին. — սուրհմն պէս ձեռքի յարմար զէնք չկայ. ճշող մանուկ մը կրնաք անոր ծայրը անցընել օդին մէջէն, եւ նոյն զէնքովը մայրն ալ շամփրել եթէ այդ սի-

րուն ժամանցին զէմ բողոքելու անհարկի վարժուներուն նայ. — ու քիւրտերն ալ իրենց դանակները կը յետանէին: Կ. Պոլսէն գաղտնի հրահանգ ստացած էին շարժելու ու չինայելու, և, իբր հաւատարիմ հպատակ, գոխային Համիտին անարգ հրամանը տեղը տանել պատրաստուած էին: Ատկից գատ, անսահման աւար կար թալլելիք հարուստ վաճառականներուն տուններուն մէջ, կիներ՝ իրենց ամուսիններէն խլելիք, կոյսեր՝ իրենց մայրերէն, անմեղ ալեհեր ծերունիներ՝ երկաթագամ լախտերով սպաննելիք, հայ վաշխաւորներ՝ որոնց պէտք էր ստացական մը տալ գնտակի ձեւով, յապաղած վճարումներուն փոխարէն: Սըվազէն գուրս, այն զինուորները որոնց ըսուած էր զիւանեցուն համար փոսեր փորել, կը քրթմնջէին իրենց աշխատութեան անշահութեանը զէմ, որովհետեւ աղէկ գիտէին թէ բուրդովին սրբուած սկրթուած զիւանեք միայն պիտի հասնէին իրենց ձեռքը: Սըվազի թիւրք բնակիչներն ալ նոյնպէս մեծապէս նեղացած էին երբոր կուսակալին օգնականը իմացուցած էր իրենց թէ Ամբրիկեան միսիոնարութեան տանը զէմ ու է յարձակում արգելուած էր: Ինչ հաճելի գործ մը պիտի ըլլար վզերնին ոլլըրել այդ անհաւատ շուններուն որոնք այնքան ապիրատօրէն փայփայած էին հայ ցեղին վտանգաւոր փափաքը կրթութեան բարեփոխութիւն օգտուելու: Բայց սրիկաներու ընտրեալ խումբը որոնք կուսակալին աղերսագիր մատուցած էին մէկ քանի խարոյկ վառելու միսիոնարութեան տան շորս կողմը, մեծապէս ուրախացան երբոր կուսակալին օգնականը զիրենց միսիոնարութեան տանը առաջ տարաւ և բարձրաձայն Պատ. Ալֆէնու Մարշալը կանչեց:

«Իր իրարանցումին մէջ, Պատ. Ալֆէնու մոռցաւ վրան անելու վերարկուն զոր սովորաբար կը հագնէր իբր հանգիստական պատմուճան մը երբոր կուսակալը կամ օգնականը այցելութեան գային իրեն, ու երեւան եկաւ՝ որսի երկայնափող հրացան մը ձեռքը:

— Ինչպէս էք, հարցուց զրանը մէջէն: Եթէ իբր բարեկամ կուգաք, ժամանակ չունիմ կորսնցնելիք. եթէ իբր թշնամի կուգաք, ինձի ցաւ պիտի ըլլայ ծակ մը բանալ ձեր պաշտօնական մարմինն մէջէն, բայց ուրիշ կերպ չեմ կրնար ընել. ու ես աղէկ կը ճանչնամ այս ձեր հրացանը, վա՛յ բանալիք ծակին:

«Կուսակալի օգնականը յամբօրէն վար իջաւ իր շորիէն, և զինուորներուն հրաման տուաւ միսիոնարութեան տան գուռը պահպանելու:

— Աս եղաւ մի՛, ըսաւ՝ բարեկամական շեշտով մը՝ զրգուած ձեր միսիոնարին: Ձեր բժիշկը զիս թիֆօյէն աղէկացուց, ու հիմակ գուք ելեր իմ մէջս ծակեր բանալ կ'ուզէք ատ անշնորհք զէնքով: Դուք, սուրբ հօձաւ մը:

— Հետո եկէ՛ք, ըսաւ՝ ձեռքնին չորութեամբ: Գիտե՛մ, Եւսուսֆ փաշա, հրաման ստացած էք այդ արիւ-

նալի գործը կատարելու. ես ալիմ հրամաններս ստացած եմ—տարբեր Տիրոջմէ մը: Հիմակ, ինծի մտիկ ըրէք: Ձեր մարդիկը մեր տունէն պիտի հեռացնէ՛ք, թէ չէ թող պիտի տաք որ մեր վրայ յարձակին: Մենք չենք վախնար. բայց գիտնալ կ'ուզեմ, որովհետեւ ուրիշ բան ունիմ ընելիք:

«Արցունքները կը զլորէին ծերունիին այտերէն վար: —Կարծես աշխարհիս վերջը հասեր է, հառաչեց: Աշխարհիս վերջը, եւ ամբողջ կեանքի մը աշխատութեանը վերջը:

«Երեսուց փաշա իր պարարտ ձեռքերը վեր բարձրացուց վհատութեան շարժումով մը, յետոյ սիկառէթ մը վառեց:

—Սիրելի հօձաւ, ըսաւ իր ամէնէն քաղաքակիրթ կերպովը, զօրքերը իմ հրամանիս տակ չեն. կուսակալը չենք գիտեր ո՛ր է. ես չեմ կրնար բան մը ընել: Ասկից զատ, ինչ ասանկ իրար կ'անցնիք կ'որ մէկ քանի Հայու համար: Գուցէ ալ ինծի պէս քաջ գիտէք թէ միակ աղէկ Հայը մեռած Հայն է:

—Ատ հաշուով շատ գէշ հայ պիտի չմնայ, ըսաւ ծերունին թախծութեամբ: Հապա անո՛ւշ պզտիկ տղաքները: Ա՛հ, եթէ ձեր օգոստափառ տէրը ձեռքս անցնելու ըլլար, իրեն ուղեղը դուրս կը թափէի:

«Ու հրացանը ուր տարաւ, աչքերը կրքէն վառելով:

—Սո՛ւս, ըսաւ միւսը: Խըսակքը ասօնկ է եղեր: Մէկ Առտուած միայն կայ: Մուհամմէտ Աստուծոյ մարգարէն է, եւ իմ օգոստափառ տէրս Աստուծոյ ստուերը երկրի վրայ:

—Մէկդի ձգենք ատոնք, ըսաւ Պատ. Ալֆէուս: Ձեր օգոստափառ տիրոջը ինչ ըլլալը շատ շանցած ամբողջ աշխարհէ պիտի գիտնայ: Ես ձեզի շատ աղէկ կը ճանշնամ. ուղղակի աչքերուս մէջ նայեցէք, և ըսէք թէ հոգ պիտի տանիք միոխնարութեան մէջ ծառայող Հայեւուն ապահովութեանը, ու ձեր սրիկաներէն մէկ քանիսն ինծի պիտի տաք՝ Գարա Օղլուն հտեւէն երթալու համար: Միակ Հայը որ պէտք էիք օպաննել, անոր մասին ալ հոգ ըրած չունիք:

«Կուսակալի օգնականը, որ աշխարհիս վրայ մնացած մէկ քանի աղէկ թիւրքերէն մէկն էր, իր այլալլած ձեր բարեկամին աչքերուն մէջ նայեցաւ շեշտակի, ու Մարգարէին մօրուքին վրայ երգօւրնցաւ որ Միսիոնարութեան տանը եւ անոր բնակիչներուն ձեռք պիտի չդպցուէր, և թէ տասը ընտրեալ մարդիկ պիտի տար Պատ. Ալֆէուսի՝ երթալու Գարա Օղլուն բանելու իր որջին մէջ:

—Ատիկա շատ ծանր խնդիր մըն է, աս Անգլիացիին առեանգած ըլլալը, ըսաւ խորունկ կերպով մը: Գիտէք աս անգլիացի դիւահարները, աշխարհէ տակնուվրայ կ'ընեն անգլիացի հպատակի մը համար: Ասկից զատ, երեսուցները փրկելու ենք: Չափուշը կը կանչեմ ու պէտք եղած

հրահանգները կուտամ:

«Չափուշը կանչեց:

—Ինչ աղէկ զինուորներէդ տասը հաար զատէ, ես Գարա Օղլուն ինծի բեր, ողջ կամ մեռած. մեռած աւելի լաւ կ'ըլլայ, խնդիրը կը լմնայ: Էրտսգուս էֆէնտին և հայրը սէտք եղած հրամանները պիտի տան քեզի: Լաւագոյն է որ ուղղակի քարայրը երթաք, Էրտսգուս էֆէնտին տեղը գիտէ, և մէկ ժամէն ճամբայ ելէք:

«Յետոյ զօրքերուն հարիւրապետին դանալով, այս շէնքերուն չորս կողմը զօրք շարեցէք: Ձեր գլխուն վրայ պատասխանատու էք ասոնց ապահովութեանը, ու հոս գտնուող իւրաքանչիւր էրիկմարդու, կնոջ ու տղու ապահովութեանը:

«Հարիւրապետը բարեւեց: «Գլխո՛ւս վրայ» պատասխանեց զինուորական կարճատուութեամբ: Ինք կը օպա. «էր պզտիկ թալանի մը այգտեղ՝ իր յետուրդ ամօսականներուն պարապը լեցնելու համար, ու ձեր միսիոնարին որսի հրացանը շատ գործին պիտի գար՝ Սըվազի շուրջը գտնուող մօրուաններուն մէջ որսալու համար: Բայց ինչ ընես խըսակք չէ եղեր: Միւս կողմէն ալ աւելի կը կատարէր շուկայէն եկող աղաղակներն ու ճիչերն իմանալով, մինչդեռ ինք կարող չէր երթալ մասնակցիլ հոն կատարուող բարի գործին: Ուսերը թոթուեց ու քաշուեցաւ, գրեթէ կնոջ մը զարնուելով դրանը մէջ:

Ահա Միո Ուիլսընը կը գտնենք նորէն:

Միսիոնարուհին անկին մը կը տանի հարիւրապետը, եւ անոր շացած աչքերն առջեւ խոշոր քօակ մը կը խաղցնէ:

—Եթէ տասը վայրկեանէն թիւրք զինուորի մը հագուստը կապուստը տաք ինծի, կ'ըրէ, այս օտակը ձերն է: Ասկից զատ, ինծի մէկը պէտք է տաք հետօ գալու համար: Երկու ձիու պէտք ունիմ: Մին ձեր ունեցած լաւագոյն ձին ըլլալու է:

—Ինչ բանի համար:

—Ինչերն ո՛ւր պէտք է կ'ընէ՞ք:

Հարիւրապետը կը մտածէ: Ինչո՞ւ չէ՛, բաղդը ահա կուգար իր դուռը ափ կ'անէր ու տարի մըն է ամօսական ստացած չէր: Գլխովը հաստատական նշան մը կ'ընէ, քօակը կ'աննէ, ու կը մտածէ որ դիմացինը խենդ ըլլալու է: Եթէ այդ տարօրինակ հանրմը կ'ախորժէր հօգեվարը Հայերու մէջտեղ ման գալէ, իր գիտնալիք բանը չէր:

Հագուստները թամբիս կապեցէք, ամէնէն աղէկ ձին, ես հիմա կուգամ:

Մէկ քանի վայրկեան վերջը: մինչ Էրտսգուս եւ հայրը տաք խորհրդակցութեան մէջ են, Միո Ուիլսըն ասունէն դուրս կը օպրդի, անկինը կը դառնայ, և, կեանքին մէջ առաջին անգամը ըլլալով, առանց օգնութեան ձին կը հեծնայ: Մէկ մտածում մը ունի ուղեղին մէջ: Գարա Օղլուն, այդ ասպետական ու անձնուցր օրբա-

հարը, մտայնուտ վտանգի մէջ է, ու պէտք է ազատէ զանի: Ինք ամենազոյզն տարակոյս շունի անոր անսեղութեանը մասին. բայց քաջ զիտէ ինքզինքնին զինուոր կոչող կոպիտ վայրենիներուն բնութիւնը, և կուսակալի օգնականին տուած հրամանները թաքուն իմաստ մը ունէին որ իր ուշադրութենէն վրիպած չէր: Ու այսպէս, առջեւէն գացող ու ճամբայ բացող զինուորին ետեւէն, քարքարոտ փողոցէն շատ չանցած արձակ դաշտը կ'իջէ, և երեք քառորդ ժամու առաջնութիւն ունի Էրաստրուի եւ անոր տասը մարդերուն վրայ:

Քաղաքին վրայ նայող սարահարթը հասնելուն պէս, Միս Ռիլընը, զգալով որ ա'լ վտանգ չի կայ, հինգ ոտի կուտայ զինուորին, ու կ'ըսէ անոր որ ազատ է օրուան մնացեալ մասը ուղածին պէս անցընելու:

Չինուորը դրամը կ'առնէ, ցանկութեան նայուածք մը կը նետէ քաղաքին վրայ, ու տարբեր ճամբայէ մը ետ կը դառնայ քառարշաւ: Ինք ալ յետնորդ ամսականներու պակասը լրացնելու պէտք ունի:

Միս Ռիլընը չորս ժամ կ'երթայ իր ճագուռի ու առայգ ձիուն վրայ, ու վերջապէս ինքզինքը քարայրին առջեւ կը գտնէ: Վիլլուկը սիրտն առած է հիմա, երբ ձիու դափրի հետքեր կը տեսնէ քարայրին մուտքին շուրջը: Վար կ'իջնէ, ձին մացառի մը կը կապէ, ու ներս կը մտնէ: Պահ մը, ոչինչ կը գտնազանէ: Մթութիւնը կ'ահաբեկէ զինքը, ու ետ դառնալու վրայ է երբ մարդ մը կը նշմարէ որ ծայրագոյն վհատութեան զիրքով մը նստած է մարեւու մօտ խոշոր կրակի մը քով: Այրող միտի մասնաւոր հոտ մը կայ օդին մէջ: Մոսկուսէն կէս հիւանդ, Միս Ռիլընը կը տեսնէ ուրիշ մարդու մը մասամբ ածխացած մարմինը կրակին միւս կողմը:

Իր քայլերուն ձայնէն, զիակին քով նստած մարդը զլուխը վեր կ'առնէ:

— Պատրա՛տ եմ, կ'ըսէ ուժեղ ձայնով մը, հայերէն: Եթէ զիս կը փնտռէք, եկէ՛ք բռնեցէք զիս:

— Գ-Գ-Գարա՛ Օղլու, դո՛ւք էք, կը հարցնէ Միս Ռիլընը՝ հրճուանքէն զողալով: Ինչ պատահեցաւ: Չէ՞ք կարող շարժիլ:

Լոյսի ճառագայթ մը կը կածկլտայ անզգամին խօրո աչքերուն մէջ:

— Դո՛ւք էք, իմ բարի հրեշտակ: Ազատեցէ՛ք զիս, կը գոչէ, ջանալով ինքզինքը քաշկոտել զէպի միտիւնաբուհին:

— Ազաան՛ը: Չեմ . . . չեմ հասկնար կոր: Ինչո՞ւ մի նակ էք:

— Չէ՞ք տեսներ կոր, կ'ըսէ Հայը վայրագ շեշտով մը: Իմ ազնիւ հայրենակիցներս թունիս մէջ զիս կապեցին, վրաս գտնուած հազար ոսկին գողցան ու ձիս ալ առնելով ելան փախան: Վախնալով որ պատահած մահը . . .

Կանգ կ'առնէ, տեսնելու համար թէ Միս Ռիլընը օ՛ր-

շափ տեղեակ է գործին:

— Չէ՞ք կրնար թեւ երս քակել, կ'ըսէ անհամբեր: Ան միտիւնար խօսքը անշուշտ շատ չանցած հոս պիտի ըլլայ զօրքերով, ու պիտի մեղքընեն զիս, Մեղքընել, ո՛վ անիրաւութիւն, մեղքընել զի՛ս որ այնչափ բան ըրած եմ հայրենիքիս համար:

Միս Ռիլընը քայլ մը տուելի կը մօտենայ:

— Ըսել է լուր շունի՛ք հոս կոտորուող ջարդէն: Սը վագի մէջ Հայ՛ մը չի կայ որուն կեանքը դեռ մէ՛կ ժամ ապահով ըլլայ:

— Գիտէի որ կը մօտենար կոր: Օ՛հ, զլուխ կը ցաւի կոր, կ'ըսէ աւագակը յոգնութեամբ: Չէ՞ք կրնար կապերս քակել՝ սա մարդիկը դեռ չեկած: Բայց ինչ օգուտ, ձիս առած տարած ըլլալու են:

Միս Ռիլընը գրպանէն զմելին կը հանէ: Ո՛վ կ'ըսէ թէ ատ ողբալի ոգորմելի արարածը այն խիզախ հրոսպետն է որ այնքան յանդգնօրէն իրեն դարպաս ըրած էր: Յետոյ, իր ուղեղին մէջ գտնուած ցորեն մը խելքը զլուխը կուգայ:

— Նախ պայմաններնիս որոշենք, կ'ըսէ: Իւրաքանչիւր վայրկեան թանկագին է: Չօրքերը կէս ժամէն հոս պիտի ըլլան: Ես անոնցմէ առաջ վագեցի եկայ ձեզի իմաց տալու համար:

Գարա Օղլու կը սկօի ինքզինքը գտնել, և կացութիւնը ըմբռնել: Իր էնթրիկի հանձարը վայրկեանին օտքի կ'իջնէ:

— Երէկ, կ'ըսէ, ձեր փախչելէն անմիջապէս ետքը օրիկաները զիս գետինը զարկին անկենդան: Ինձի դէմ ոիս ունէին որ դրամս չէի ի տար իրենց, որովհետեւ սուրբ գործին պահած էի այդ դրամը, ազատութեան սուրբ գործին: Հիմա կը հասկնամք թէ ինչո՞ւ այս խղճալի կացութեան մէջ եմ:

— Լիովին կը հասկնամ, կ'ըսէ Միս Ռիլընը: Չեր մօրը ոսկորներուն վրայ երդում ըրէք— գիտէր թէ ատիկա միակ երդումն էր զոր ոչ մէկ Հայ, քաղաքակիրթ թէ անքաղաքակիրթ, կը համարձակի դրժել (?)— երդում ըրէք թէ ինձի հետ պիտի ամուսնանաք, ու ես կ'ազատեմ ձեզի: Ես հարուստ եմ, ու կրնամ ձեզի երջանիկ ընել: Եթէ ոչ, ի զուր պիտի փորձէք փախչիլ: Բոլոր նաւահան գիտները փակուած են: Կարծեմ հեռուէն ձիերուն զփոտոցը կ'իմանամ կոր: Երդում ըրէք, ու ես ձեզի կ'ազատեմ:

Գարա Օղլու, հասկնալով որ մահուան առջեւ հընկճընկալ կարելի չէ, մօրը ոսկորներուն վրայ երդում կ'ընէ Միս Ռիլընին հետ ամուսնանալու, կը բաւէ որ զինքը անվտանգ երկրէն դուրս հանէ:

Չմելիի հարուածով մը, Միս Ռիլընը աւագակին կապերը կը կտրէ, քարայրին բերանը կը խուժէ, անձիւթեամբ չորս զին կը նայի, եւ կը գառնայ կուգայ թիւրք զինուորի համազգեստով մը:

— Դեռ մարդ չերևնար կոր, կ'ըսէ: Աստուք հագէք, ես երթամ գուրը հսկեմ:

Մէկ քանի վայրկեանէն, բարձրահասակ, հուժկու զինուոր մը քարայրէն դուրս կ'ելլէ:

Այգ մարդուն և տասը վայրկեան տառջուան վախկոտ ողորմելիին հակապատկերը Միս Ուիլսընի աչքին չի զարներ: Ինք ուրիշ բան չի տեսներ բայց եթէ անոր գեղեցիկ դէմքը ու պարթև հասակը: Յանկարծ Գարա Օղլու յուսահատութեան աղաղակ մը կ'արձակէ:

— Ձիս տարէր են, կ'ողբայ, աւագակներ, սրիկաներ:

— Իմս հոս է, կ'ըսէ Միս Ուիլսըն:

Գարա Օղլու գէպի ձին կը խոյանայ՝ կծիկը գնելու փախչելու համար, բայց Միս Ուիլսընի ատրճանակին շողիւնը խելքը զուխը կը բերէ:

— Նախ գուք հեծէք, կ'ըսէ միսիսնարուհին՝ մէկ ձեռքովը ձիուն սանձը բռնած:

Գարա Օղլու կը հեծնէ:

— Հիմակ զիս ետևնիդ առէք:

Դիւրին գործ չէ, բայց կ'ընէ:

— Ա՛յ հիմա Սամսոն, կ'ըսէ Միս Ուիլսըն: Կ'ենթադրեմ որ ուրիշ ճամբայ մը գտնելու էք ուր շատ ուշադրութիւն չգրուենք: Հեռուէն զէնքերու շողիւն մը կը տեսնեմ կոր կարծեմ: Աղէկ ձի է աս:

Գարա Օղլու առջ կը քշէ անասունը:

— Հիանալի, կը բացագանչէ սխրանքով: Փաշայի մը ախոռէն գողցուած ըլլալու է:

— Եա՛տ աղէկ ուրեմն, կ'ըսէ իր առևանգիչը: Երբոր Պոլիս հասնինք, հոն կ'ամուսնանանք ու անմիջապէս ճամբայ կ'ելլենք ամերիկեան նաւով մը: Սամսոնի մտենալնուս պէս, ձիէն վար կ'իջնէք քովէս կը քայլէք ու կ'ըսէք թէ իմ ջւղեկիցս էք: Անգամ մը որ հոն հասնիք, զիրար կրնաք ուրիշ կերպարանք մը ծպտիլ:

Գարա Օղլու հաւանութեան բառեր կը մրմոյս չկա՞մութեամբ: Ակնեղ կը տեսնէ թէ երկրէն ողջ դուրս ելլելու ուրիշ միջոց չկա: Եթէ, ինչպէս պատճառներ ունի կասկածելու, ջարդը ընդհանուր է, նոյնքան վտանգաւոր է էջ: Պոլիս որքան Հայաստան թնայր: Ամերիկա ու Ռուսիա միակ շրջաններն են որ իր առջեւ բաց ըլլան, և քրովհետեւ կարող չէ Ռուսիա անցնիլ, ուրիշ հնար չկայ բայց եթէ Ամերիկա երթալ: Որչափ աւելի կանուխ սկսի անձնուէր սիրահարի գերը խաղալ, այնքան աւելի լաւ է իր անձնական ապահովութեանը համար:

Թաւուտի մը մէջէ անցնելու վրայ են, երբոր Միս Ուիլսըն պատիկ ձի մը կ'արձակէ, և կը սկսի բոլոր մարմնովը գողգողալ:

— Ի՛նչ կայ, ի՛նչ եղաւ, գոչո՞ւմ, (սնագրին բառն է): կը հարցնէ Գարա Օղլու գորովագին:

— Դի-գիտեմ, տղայութիւն է ըրածս, կը հեկեկայ Միս Ուիլսըն, բայց ի՛նչ ընեմ, թրթուր՝ մը վզիս վրայ ին-

կաւ, ու վախցայ:

— Դող ելլալիք բան չէ, հոգիս, կ'ըսէ Գարա Օղլու խանդաղատանքով, ձին քշելով գէպի մեկուսի կածան մը զոր ինքը միայն կը ճանչնայ: Չարմանալու չէ որ թըրթուրները անգամ աղուորը կը փնտոնեն:

— Ձեզի հետ ճամբան կարճ պիտի գայ, կ'ըսէ Միս Ուիլսըն: Հոգիս մարմինս ձեզի տուած եմ:

— Կ'ընդունիմ, եթէ ձին ալ ընդունի, կ'ըսէ մտքէն Գարա Օղլու, որ սկսած է ինքզինքը գտնել:

Ու ճամբան կը շարունակեն:

Երբոր Էրասզուս եւ հայրը քարայրին մօտ կը հասնին իրենց տասը զինուորով և ներսի կարծեցեալ մարդերուն ձայն կուտան անձնատուր ըլլալու, պատասխան չեն ստանար: Թոմսըն (առջի իրիկունը դրամը Գարա Օղլուի վճարած է, եւ իրեն ըսած են որ Գոլսըն Գին յաջորդ ատուն կանուխ ամերիկեան միսիոնարութեան տունը պիտի ըլլայ) ամէնէն առաջ Էրասզուսի հետ քարայրը կը մտնէ, եւ տիրոջը ամխացած մարմինը կը ճանչնայ:

Էրասզուս, հիւանդ ու զողահար, իր վերաբերում խեղճ զոհին մարմին վրայ նետելէ ետքը, քարայրէն դուրս կը խուժէ: Պահ մը ետքը հայրը կուգայ զինքը կը գտնէ:

— Իր գերեզմանը այստեղ փորենք, կ'ըսէ ձերունին: Լաւագոյն է որ Ֆինէլլա շտեմնէ զինքը:

— Ա՛խ, հա՛յր, հա՛յր, ի՛նչպէս զինքը թողուցի այս բաղդին:

Ծերունին կը սրտապնդէ զինքը:

— Պէտք է անմիջապէս թաղել, կ'ըսէ խղզուկ ձայնով մը:

— Սա ծառին տակ լաւագոյն պիտի ըլլայ, կ'ըսէ երեսասարգը զինուորներէն մէկէն սուին մը յանելով եւ սկսելով տենդոտորէն հողը փորել:

Հազիւ սուինի մէկ քանի հարուած տուած է, երբոր երևան կը բերէ ծանրկեկ պզտիկ սնտուկ մը: Էրասզուս անտարբերութեամբ կ'աննէ գայն, կը բանայ, ու ափ մը լեցուն աղամանդ կը հանէ մէջէն ու նորէն տեղը կը դնէ:

— Պ. Ֆրոմի աղամանդներն են, կ'ըսէ անհոգ կերպով մը: Երբ բոլոր դժբաղդութեանց պատճառը աստուք են, հայր: Առէք ու Ֆինէլլայի տուէք: Եթէ վրաս ըլլան, գուցէ ուրիշի մըն ալ մահուան պատճառ դառնամ:

Ու կը վերսկսի փորել թաց հողը:

Պատ. Ալֆէուս աղամանդները կ'աննէ ու գրպանը կը դնէ: Յետոյ զինուորներուն ձայն կուտայ առաջ անցնելու և գերեզմանը փորելու օգնելու:

Երբոր կը լսնայ, Թոմսըն տիրոջը մարմինը կը բերէ, ու յարգանքով հողին մէջ կը դնէ: Էրասզուս ծունկի կը գցայ, գգալով որ նախամեծար պիտի համարէր աչխարհի մէջ բոլոր ունեցածը տալ, նոյն իսկ Ֆինէլլայի սէրը, եթէ կարելի ըլլար ողջնցնել խեղճ մեռելու: Ձիւնուորները քիչ մը ետեւ կանգնած են իրենց հրացաններուն

վրայ ծոած: Թոմսըն, ցաւն պիրկ, Էրասուոսի քով կը ծնրադրէ: Պատ. Ալֆէուս զլզխը կը բանայ, ու կ'ազօթէ:

Երբ արարողութիւնը կը վերջանայ ու հողը կը ծածկէ կոյր բանաստեղծին մարմինը, Պատ. Ալֆէուս Էրասուոսի թեւը կը մտնէ ու ոտքի կը հանէ զանի: Էրասուոսը զանգաղ քայլերով կը յառաջանայ զԼպի ձիերը: Յանկարծ, ճիշ մը կ'արձակէ, եւ մացառներուն վրայէն կապոյտ հագուստի կտոր մը կը քաշէ կը հանէ:

— Կնկան հագուստ մը, կ'ըսէ: Միս Ուիլսըն հոս եկեր է: Տեղեկութիւն ունի՞ք աս բանէն, կը հարցնէ շավուշին զառնալով:

— Ո՛չ, Լֆէուսի, կ'ըսէ անպիտանը: Բայց Սէլիմ մենէ ժամ մը առաջ ճամբայ ինկաւ՝ մեր լաւագոյն ձիերէն երկուքը առնելով:

— Աւելորդ է ատոր խօսքը ընել, ա՛լ կարելի չէ աւազակը հոս գտնել, կ'ըսէ Պատ. Ալֆէուս: Բայց Աստուծոյ պատուհաօր իր զիւուն պիտի հասնի, նոյն իսկ եթէ Միս Ուիլսըն զինքը առած Ամերիկա տարած ըլլայ:

Ու հրացանը առնելով զԼպի Սըվազ կը սուրա իր հօտը պաշտպանելու:

Չորս ամիս ետքը, Պ. և Տիկին Ուիլսըն (իր ամուսինը, կը պատմէին, օտարական մըն էր որ հաւատքի գալէն ու Եկեղեցին ընդունուելէն յետոյ, կնօջը անունը առած էր) ժրօրէն զբաղած էին Եկեղեցիին պարտքերը վճարելու սահմանուած միզինկով մը, գանատկան Մորրիսպուրկ պգտիկ քաղքին մէջ, ճիշտ Նիւ-Իորքի նահանգին զիմաց: Պ. Ուիլսըն, բարձրահասակ, թխագէմ, գեղակազմ մարդ մը, որ մէկ աչքին վրայ սեւ կապ մը ունէր, ալիխառն մազերով, տակաւին բանախօսած չէր միզինկին մէջ: Իր կինը յոգնած կ'երևնար: Պերճախօս ուղերձի մը մէջտեղ, Տիկին Ուիլսըն յանկարծ կը կակազէ, խօսքին թելը կը կորսնցնէ, ու վար կը նստի: Էրասուոսը ու Ֆինէլլա տեսած է որոնք սրահը մտած են, հետեւինն ունենալով աչքաբաց ու անհանգարտ մարդ մը, որուն գաղտնի ոտտիկան մը ըլլալը տիկին Ուիլսըն բնագաբար հասկցած է:

Միսինարուհին բան մը կը փոփօայ իր էրկանը, որ վայրագօրէն չորս զին կը նայի: Սրահէն դուրս ելլելու ուրիշ ճամբայ չկայ բայց եթէ դուռը: Ոտքի կ'ելլէ, իր կեղծամը ու կապը կը քաշէ կը հանէ, ու երեւան կուգայ իբր երեսուն տարեկան գեղազէմ երիտասարդ մը:

— Ներկաներուն մէջ լրաբերներ կան, կը հարցնէ շլմորած սենկնդիրներուն:

Միզինկին կազմակերպիչներէն մին զլուխը կը թոթուէ:

— Մեղք, կ'ըսէ Գարա Օղլու անպատկառ ձայնով մը, քանի որ առիկա հաւատաարածութեան միզինկ մըն

է, կ'ուզէի իմ գծոյքի փորձառութիւնս պատմել: Ահա չորս ամիս է որ այս կնօջը հետ կ'ապրիմ, ու ա՛լ Աստուած գիտէ քաշածօ իր գձձութենէն ու նախանձէն: Հիմակ, անպիտան ոտտիկանութիւնը իս կ'ուզէ մարդասպանութեան մեղադրանքով մը: Լաւագոյն կը համարիմ անգլիական կախաղանը քան այս կնօջ հետ ապրիլ: Բայց ձեռքէն ազատելու ուրիշ միջոց մը ունիմ... ա՛հ:

Մատը գտնուած մատնին բերնին կը տանի, որով ինքզինքը պիտի թունաւորէ, բայց գաղտնի ոտտիկանը, որ կամաց մը բեմը ելած է, ետեւէն կարծեցեայ անձնասպանին վրայ կը նետուի: Կարճ ոգորում մը տեղի կ'ունենայ, ու մատնին կը խլուի Գարա Օղլուի ձեռքէն:

Էրասուոս ու Ֆինէլլա սրահէն կը մեկնին ու իրենց օթելը կը դառնան: Շատ շանցած տիկին Ուիլսըն կուգայ կը գտնէ զերեսնք:

— Ձինքը Անգլիա պիտի տանին, կ'ըսէ ամօթահար ձայնով մը: Ամբողջ յանցանքը իմս է: Եթէ իմ անպիտան սնափառութիւնս եւ նախանձս չըլլար, Ռեքսիգա կամ ուրիշ անանկ տեղ մը կ'երթար սւր անգլիական օրէնքը չկարենար ձեռք զնել վրան: Բայց ես կ'ուզէի խօսիլ, երևնալ, ու զինքը համոզեցի որ կեղծամ մը դսէր ա՛լ վըտանք չկար: Հիմակ ամէն բան վերջացաւ: Իրեն հետը պիտի երթամ: Կ'ուզէի ձեզի ըսել որ ան կոյր մարդը ինք շսպանեց. այդ մեղքը իրմէ փնտոելու չէ: Ան մարդը ինքզինքը զարկաւ, որովհետեւ Էրասուոսի տեղը ինք մտացած էր: Կ'ուզէին Էրասուոսը ողջ ողջ այրել:

Ֆինէլլա սոսկումի ազաղակ մը կ'արձակէ և կը մարի կ'իյնայ իր էրկանը թեւերուն մէջ:


— Մնաց բարով, կ'ըսէ Միս Ուիլսըն շարաշուք կերպով մը: Կ'ուզէի որ Ֆինէլլա զիտնար այս բանը:

Ու դուրս կ'ելլէ:

Վէպը այստեղ կ'աւարտի, Միս Ուիլսընի այդ ահեղ յայտնութեանը վրայ որ սահմանուած է երիտասարդ ամուսին երջանկութիւնը պղտորելու: Իսկ թէ Գարա Օղլու ինչ վերջ կ'ունենայ, հեղինակը մեզի կը թողու ետթաղել:

Լ. ՉՈՐԹՈՒՄԵԱՆ

ՎԵՐՉ



ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍԸ

Շարունակորիւն

Պրոպագանդիստը ոսկիներուն ծրարը տեղաւորեց Կամացուկի ծրարին քով, յետոյ գովեստներ կարդաց Պատուհաս խմբի անդամներուն գործունէութեան վրայ:

— Պէտք է ձեր մասին մի լաւ վկայութիւն տամ կեդրոնին, ըսաւ Աշոտի ուսը ծեծելով, Հա՛, եեզ տեսնեմ, տղերք՛, անձնուիրաբար աշխատեցէ՛ք, ազատութիւն կամ մահ: այս է մեր դիվիզը, Մայր Հայաստան ձեզի կը նախ արտասուալից աչքերով եւ «Վրէժ» կը յրմշէ...

— Ատոմի ազատման մասին ինչ կարելի է ընել արդեօք:

— Այդ մասին կը խորհուի. ի հարկ է պէտք է ջանալ նրան փրկելու այդ վատ թրքերի ճանկից ... պէտք է այս մասին խօսիմ ազգեցիկ անձերի մօտ, և եթէ այդ կերպով կարող չեղանք զինքը բանտէն ազատելու, այն ատեն յեղափոխական գործողութեամբ կ'ազատենք ... դու առ այժմ գտի՛ր Ատոմի մի լուսանկարը:

— Լուսանկարը ...

— Այո՛, որպէս զի եթէ մի ծանր գատապարտութիւն կրէ կամ բանտի մէջ մեռնի, պատկերը գնենք մեր թերթին մէջ, իրրու մեր կուսակցութեան հերոսներէն մէկը:

Աշոտ խօստացաւ գտնել լուսանկարը և քիչ մըն ալ տեսնուելէ ետքը իր պետին հետ, մեկնեցաւ հետեւեալ օրը կրկին գալու որոշմամբ: Կուլտամեանց, երբ ատանձին մնաց, անցաւ զրասեղանին առջեւ եւ մինչեւ այդ օրը հանգանակուած գրաֆներուն հաշիւն ըրաւ և տեսաւ որ քովը 2200 ոսկիի շափ ժողվուած էր: Ոսկիները իստունական հատ համրեց ու զատ զատ թղթի պատասաններու մէջ փաթթեց, յետոյ պատասանները քովէ քով շարեց զարակին մէջ սիրատարի, գորովալից նայուածք մը ուզեց անոնց. անկեղծ, անխարդախ, գորովալիք սիրահարի նայուածք մը որ զուրկ չէր տեսակ մը երազկոտ անուշութենէ:

Յետոյ սկսաւ հանուել: Ատոմի ձերբակալութիւնը, որ յանկարծ միտքն ինկաւ, զինքն անհանգիստ ըրաւ:

— Եթէ այդ տղան բաւական կամք չունենայ ու ամէն բան պատմէ, խորհեցաւ, կրնայ շատ մը ձերբակալութիւններու տեղի տալ և վերջի ի վերջոյ նոյն իսկ վտանգել զիս,

Եւ կարգ մը հաւանականութիւններու տխուր հեռապատկեր մը պարզուեցաւ երևակայութեանը առջեւ: Ատոմ, բանտի ու հարցաքննութեան տաժաններուն չը կրնալով տոկալ բերան կուտայ իր ընկերները, ոտտիկանութիւնը առանց Աշոտը ձերբակալելու կը հսկէ վը-

րան, կը հասկնայ թէ որքա՛ն հետ յարաբերութիւն ունի եւ վերջապէս կ'իմանայ իր անունն ու հասցէն: Չինքը կը ձերբակալեն, մէջտեղ կ'ելլէ իր ուսական հրպատակ չ'ըլլալը, տունը կը խուզարկեն, գրաֆները կ'անցնին վատ թիւրքերուն ձեռքը եւ ինք կը դրկուի Ռեխա և կտմ սրիչ վատտող թեղ մը: Եւ այս ամենուն մէջ, կը փճանայ, կը ջախջախուի «միկրոկոզման» որուն բարգաւաճումէն կախում ունի ամէն բան:

— Չէ՛, վարանսուր վատութիւն է, ոճիր է այն պարագային, վճռեց Կուլտամեանց, վաղն իսկ պէտք է ձրգեմ Պոլիսը, թէ՛ իմ և թէ՛ այոտեղի խումբերուն փրկութեանը համար:

Անկողնին մէջ նորէն այդ մտածումը զինքը շարունակեց լլկել: Ամէն տեսակետով իր փախուստը կ'արգարանար աչքին առջեւ, ո՛չ միայն կ'արգարանար, այլ նոյն իսկ դիցազնական արարքի մը, հերոսական գործողութեան մը համեմատութիւնը կ'առնէր: Նախ «տղերք»ը պիտի ապահովէր իր մեկնումովը, յետոյ անգլուխ պիտի շինային քանի որ ինձէլտուրեանց հոն էր եւ աւելի ազատօրէն կրնար գործել իբրև ճշմարտապէս ուսահպատակ: Ատոնցմէ զատ իր մեկնումը անհրաժեշտ էր վերջ մը տալու համար Պոլիսը տիրելու ծրարին: Պայիս մնալ առանց յեղափոխութեան կարմիր դրօշակը Կալաթայի աշտարակին վրայ տնկելու, պարզապէս վարկաբեկ ըլլալ էր ամբողջ խումբերուն առջեւ. իսկ դրօշակը տնկելու փորձել... ո՛չ, այդ աստիճանի չէր հասնէր իր յեղափոխականութիւնը: Իրա՛ւ է որ այդպիսի հոկայական խորհուրդ մը երկնելէ ետքը, չգործադրել զայն ու կծիկը գնել տեսակ մը պզտիկութիւն էր, բայց այդ պզտիկութեան մէջ Կուլտամեանց ինքզինք առանձին չէր զգար: Մեծն Նաբոլէոն ալ Անգլիա արշաւելու ծրարիւրը յղացաւ, բայց չկրցաւ գործադրել: Բաց աստի խումբերը կազմ ու պատրաստ հո՛ն էին, թող ծրարիւրը յաջողցնելու փորձը ինձէլտուրեանց ընէր եւ իթէ յաջողէր, թո՛ղ ան անէր յաղթութեան պտակը:

Յեղափոխական օտար գործին մէջ ամէն անձնական փառասիրութիւն կը խեղդէր, կը սպաննէր Կուլտամեանց: Իսկ քովը գտնուած գրաֆները... ի հարկէ մի սսին պիտի տանէր, վատ թրքերուն ձեռքը անցնելու վտանգէն ազատելու համար և յետոյ... Ինչեկտուրեանցի այնքան իմաստասիրօրէն բացատրած «միկրոկոզման» պէտք չէր զըրկել, կողպտել իր իրաւունքներէն: Ճշմարիտ յեղափոխականը որ արդարութեան առաքեալն է և անոր յաղթանակին համար կը կռուի, հակառակութեան մէջ կ'իմայ երբ իր անձին գէժ կ'անիրաւէ: Այդ արարքովն իսկ անարժան է անիկա անկեղծ յեղափոխական անունին, և այդպիսի յեղափոխականին արժանի է որ վիզէն երկանաքար մը կ'ապեն և... այս խորհրդաժութիւններով Կուլտամեանցի քունը տարաւ:

Հետեւալ առուու կանուխ, սենեակի զրան տրուած

ուժգին հարուստներ ընդտուտ արձնացուցին պրոպագանդիստը:

— Ո՞ր է, ի՞նչ կայ գոչեց անկողնին մէջէն՝ այս անժամանակ այցելութենէն դող ելած:

— Բա՛ց, ես եմ, Մարգարը:

Փայլակ թաղի Եայժակ խմբին պետն էր:

— Դրամ բերած ըլլալու է, մտածեց Կուլտամեանց հանդարտութիւնը գտնելով եւ գուրս նետուեցաւ անկողնէն գուռը բանալու համար:

Մարգար ներս մտաւ այլայլած գէժըով:

— Երէկ մենէ երկու հոգի առին տարին, ըսաւ խմբապետը առանց սպասելու Կուլտամեանցին որ կը պարասուէր խօսք ուղղելու, տուններին խուզարկեցին, շատ մը թղթեր ժողվեցին... երէկուրնէ ի վեր...

— Հաւաքուած զրամները...

— Քովոս են, կրցայ բերել... երէկուրնէ ի վեր թաղը գրեթէ պաշարման վիճակի մէջ է...

— Ամբողջ է:

— Այո՛, ամբողջ թաղը...

— Ախրը, թաղը չեմ հարցնիր, բերած փողերդ...

— Այո՛, այո՛... այդ երկուքին առթիւ ուրիշ շատ ձերբակալութիւններ եղան, բայց անոնք հոգ չէ, մենէ չեն...

— Որչա՞փ է...

— Քանքահինգի շափ:

— Միայն քանքահինգ:

— Է՛հ ինչ կ'ուզէ որ ըլլայ, մինակ մեր պզտիկ թաղին մէջ քօպըհինգը հատը... շատ չէ:

— Ես գտնէ երեքհարիւր կը սպասէի ձենէ, գոչեց պրոպագանդիստը յայտնապէս սրտմտած:

— Երեքհարիւր ձերբակալութիւն...

— Ի՞նչ ձերբակալութիւն, ես բերած զրամիդ մասին կը խօսիմ:

— Հա՛, կը ներեմ ուրեմն, 220 սկի է:

— Ուրեմն նախ այդ փողերը գծի՛ր կենտրոնական գանձարանում եւ ապա կը խօսենք այդ խնդիրներէ մասին, ըսաւ Կուլտամեանց զրամները առնելով:

Պրոպագանդիստը կովկասեան հայերէն կը խօսէր մանաւանդ երբ հանդիսաւոր ըլլար պ սրագան:

Ը.

Կուլտամեանց բանի մը կ'ազդուրիշ խօսքերով Մարգարը սրտապնդելէ ետքը ճամբու զրաւ:

— Այլ վարանելու ժամանակ չի կայ, մտածեց առանձին մնալուն պէս, այսօր իսկ մեկնելու է... յաջող հօլերը դադրեցան ու ձախորդութիւնն է որ կը փչէ, քաջ ղեկավար մը այդ պարագային պէտք է անմիջապէս նաւը ուղղէ դէպի անցորթ նաւահանգիստը... Եթէ ազդը ամբողջովին կարելի չէ փրկել, փրկենք գոնէ աղ-

դին մէկ անհատը:

Եւ ոկսաւ մեկնումի պատրաստութիւնները: Վտանգաւոր թուղթերը այրեց, պայուսակը կապեց, զրամները գրպանեց, յետոյ տանտիրուհին կանչելով սենեակին հաշիւը մաքրեց:

— Այս պայուսակը թող հոռո մնայ, պատուիրեց տանտիրինը, ես նաժակով յետոյ իմաց կուտամ թէ ո՛ւր պիտի ղրկէք: Եթէ գան զիս փնտռելու՝ ըսէք որ գուրս ելած եմ և չէք գիտեր երբ վերադառնալս:

Երբ փողոց կ'ու ինքզինքն ապահով ու թեթեւ զգաց, գրպանը լեցուցած ոսկիներուն ծանրութեամբը: Քիչ մը ատեն աննպատակ թափառելէ ետքը, ուղղուեցաւ Ղալթի իմանալու համար թէ ի՞նչ շոգենաւ կար նոյն օրը մեկնող:

— Եթէ բաղդ ունիմ Բաքէի շոգենաւ մը կը գտնեմ, կ'ըսէր:

Բաղդ սնէր: Լ'Առմենին պիտի մեկնէր, կէսօրէն ետքը ժամը 4ին, գէպի Մարսել:

Այս գուցարկութիւնը զինքը չափազանց ուրախացուց: Իր փախուստէն զգացած անորոշ խղճի խայթը բոլորովին փարատեցաւ: Լ'Առմենիով փախուստը պատուաւոր նահանջի մը ձեւը կ'առնէր իր աչքին, որ գրեթէ յաղթանակի մը կը մօտենար:

— Երբոր իմացուի թէ Լ'Առմենիով փախած եմ, կը խորհէր, «տղերք»ը օրրտ պիտի առնեն:

Բայց շոգենաւին մեկնելուն դեռ շատ ժամանակ կար. Կուլտամեանց բարափին վրայ գտնուած գարեջրատուններէն մէկը մտաւ ու անկիւն մը քաշուեցաւ, ոպասելով որ ժամանակը անցնի:

— Խեղճ ինձէլտուրեանց, մտածեց, կէս օրին մօտ ժամադիր եղանք իր տունը. պիտի երթայի զինքը առնելու եւ միտսին պիտի ճաշէինք:

Փամացոյցը նայեցաւ:

— Օ՛, որչափ շուտ անցեր է ժամանակը, ահա՛ արագն կէսօր է:

Ճաշը հոն ըրաւ և ժամը երկուքին մօտ գնաց Լ'Առմենիի մօտերը, որուն շուրջը արդէն իրարանցումը սկըսած էր:

Ապահով քաշուածքով ուղղուեցաւ դէպի շոգենաւին օտն դուխը, որուն օտքը օտական մը կեցած էր:

Ոստիկանը թէև կասկածոտ աչքով քննեց զայն, բայց չհամարձակեցաւ կեցունելու, և պրոպագանդիստը կրցաւ անարգել շոգենաւ մտնել:

Կուլտամեանց անգամ մը որ Լ'Առմենիի կամըջակին վրայ ոտք դրաւ, մեծկակ շունչ մը առաւ և ձեռքերովը շօշափեց գրպանները փոտակ ըլլալու համար որ զրամներն ալ իրեն հետ փրկուած էին վատ թիւրքերէն ճանկէն:

Փամը չորսին շոգենաւը սուլեց կաթսան ֆլաց եւ մեկման պատրաստութիւնները սկսան: Յեղափոխականը

վերնայարկի եզրին կոթնած կը գիտէր նաւաստիներու
գործողութիւնը: Երբ երկաթը քաշեցին ու պարանոցները
քակուելով Ղուծնի քարափէն անջատուեցաւ և սկսաւ
ծանր ծանր յառաջանալ գէպի Մարմարա, Կուլտամեանց
խորհեցաւ թէ Հայաստանն ալ այսպէս, օր մը, պիտի
հնչեցնէր իր սուլիչը, պիտի վառէր իր բաւակներու օր-
տը, ծուխ սւ բոց պիտի արձակէր և փշրելով զինքը
կաշկանդող կապանքները պիտի յառաջանար գէպի ազա-
տութիւն...

Եւ հայրենանուէր յեղափոխական պրոպագանդիստը,
սիրտը թունդ ելած, սիկառէթ մը վառեց...

Թողունը մեր հերոսը իր ճամբորդութիւնը շարունակէ
և դասանց Ինձկտուրեանցի քով որուն կնճոտ վի-
ճակը որչափ շահեկան՝ նոյնչափ ալ կարեկցութեան ար-
ժանի է:

Երբ կէսօր եղաւ և Կուլտամեանց չերեցաւ, արտա-
քոյ կարգի լիազօրը սկսաւ մտատանջութեան մատնուիլ:
Ժամը մէկին ա՛լ չկրցաւ համբերել և գուրօ ելլելով ուղ-
ղուեցաւ Կուլտամեանցի տունը: Դրանը առջեւ կեցած
էր Կամացուկ ու կը խօսակցէր տանտիկնոջ հետ, ջանա-
լով իմանալ պրոպագանդիստին ո՛ր գտնուիլը: Երբոր
հետուին նշմարեց Ինձկտուրեանցը զոր, ինչպէս զի-
տենց, նախորդ առաւու ճանչցած էր, ուրախութեան ա-
զաղակ մը արձակեց և վազելով քանի մը քալլ առաւ
գէպի անոր:

— Ո՛ր է աս մարդը, գոչեց Կուլտամեանցին ակ-
նարկելով, անպատճառ պէտք ունիմ զինքը տեսնելու:

— Կրկին փո՞ղ ես բերել, հարցուց Ինձկտուրեանց
հեշտաշփոթ ալլալլուծով մը:

— Ձէ՛, աղբար, չէ, ուրիշ գործ ունիմ... ծանր բա-
նէր կան...

— Ես ալ նրան եմ փնտռում... զարմանք օր տեսնե-
կումը չէ:

— Առտուն կանուխ գացեր է և երբ վերադառնալը
չէ ըսեր:

— Միթէ՛... բայց ես ուզեցի եմ:

Ինձկտուրեանց Կամացուկին առաջարկեց Եանիի
գարնըրատունը երթալ ճաշելու: Մեկնելէ առաջ ասն-
տիկնոջ պատուիրեցին օր եթէ Կուլտամեանցը գար, հօն
ղրկէր զինքը:

Ճաշի միջոցին խմբուկեալ պատմեց այն ծանր գեղ-
քերը որոնք պատահած էին և օրոնց մտին խորհրդ-
դակցելու եկեր էր ներկայացուցչին հետ: Ոտականու-
թիւնը քանիմը օրէ ի վեր վերջապէս անգեկացած էր թէ
յեղափոխականները մեծ ցոյց մը պատրաստելու զբաղ
են և գրամ կը հաւաքեն: Ամէն թաղերու մէջ ձերբա-
կալութիւններ եղած էր և Կամացուկի ընկերներէն մէկ
քանին ալ բանուած էին: Բանուողներուն մէջ կը գտնուէր
Սիմօն անուն ընկեր մը օրուն գազանապահութեան զբաղ
շատ վտահաւթիւն չունէր խմբագրեալ, նայնիսկ կա-

կածուիր ունէր թէ այդ Սիմօնը կաշառուած էր ոտակա-
նութեան: Այնպէս որ ժամէ ժամ ինքն ալ բռնուելու
վտանդին մէջն էր և ասոր համար խոհեմութիւն համա-
րէր էր իր տունը ձգել և Բերա բարեկամի մը քով ապաս-
տանիլ: Այսուհանդերձ շատ կը վախնար որ իր բազակա-
յութեան տունը կոխէին ու խուզարկութիւններ կա-
տարէին:

Ինձկտուրեանց հետաքրքրութեամբ մտիկ ըրաւ այն
ամէնքը, միայն զարմանք յայտնեց թէ ինչո՞ւ ոտակա-
նութեան այդչափ կը վախնային. յեղափոխական մը
միթէ՛ պէտք էր վախնար ոտականութեան և զգուշական
միջոցներ ձեռք առնէր:

Կամացուկ, ջիշ մը ամօթահար, ուզեց ինքզինքն ար-
զարացնել:

— Հարկաւ յեղափոխական մը իր կեանքը նուիրած
է Հայրենիքին և պէտք չէ որ խոյս առայ վաճառէն,
այսուհանդերձ երբ կարելի է չձերբակալուիլ, շաւազոյն
չէ՛ նոյնիսկ գործին օգտին համար զգուշութիւններ ընել:
Մանաւանդ օր իր ձերբակալմամբ ո՞ր է զգուշ չըլլալէ
զատ, մեծամեծ զնասներ ալ կրնան առաջ գալ:

Կովկասցին չհամոզուեցաւ այդ պատճառաբանութիւն-
ներէն. նոյնիսկ չափազանցեալ ու անհեթեթ համարեց
ձերբակալման վախերը, և ջանաց հաօկցնել իր խօսակ-
ցին թէ ինչ էր անհատական ազատութիւնը, թէ որ
և է քաղաքացի չէր կրնար ձերբակալուիլ ու բանտար-
կուիլ («Շփեցեք իրայում») առանց նախապէս ուսումնա-
նալ պարագաներու և օրէնքով որոշուած ձեւակեր-
պութեանց:

Իսկ զարով Կամացուկի յայտնած երկիւզին թէ՛ զուցէ
ստականութիւնը Սիմօնի յայտնութիւններուն զբայ իր
տունը կոխէր ու խուզարկէր, Ինձկտուրեանց չկրցաւ քաշ-
քաշ մը զսպել:

— Ախր, զուց երախաներ էք առկաին, գոչեց:

Եւ արգահատանքով խոսնուած հեգնութեամբ մը
բացատրեց այդ ողորմելի տգէտ հոգեօտին օր էնփօլա-
րիլիտէ զը դօմիտիլ (բնակարանի անբանաբարեկրութիւն)
անունով «մի պան» կայ («Շփեցեք իրայում») օրուն հա-
մեմատ ոչ ոք կարող է բանի մասնը մէկուն բնակարանը
առանց դատական օրինաւոր արտօնութեան, և թէ պատ-
ժական օրէնքը ասուցանքի ու բանտարկութեան կը գատա-
պարտէ ասոր հակառակ գործողը:

— Բայց, պարոն, պատասխանեց Կամացուկ, զեւ ե-
բէկ ասաւ մեր թաղը երկու տուն կոխեցին...

— Չպէտք է որ էլպէս լինի, գոչեց Ինձկտուրեանց,
գա նկատվում է արիւ զը պուլուար, Շփեցեք իրայում նրա
համար խիտտ պատիժ է սահմանվել:

Թիւրքմացութիւնը այս ձեւով պիտի շարունակուէր
անշուշտ առկաին երկար ժամանակ, երբ վերջ գտաւ
Աշտի ներս մանկալը:

Պատուհաս խմբի պեան ալ իր կարգին եկեր էր Կուլ-

տամեանցը աննեղու, եւ տանտիրուհիէն իմանալով որ արդէն երկու հոգի անոր կը ոպասէին Եանիի գարեջրատունը, փութացած էր հոն, յուսալով զուցէ աննեղմէ տեղեկութիւն մը առնել իր մեծաւորին մասին: Դասատուն արդէն կը ճանչնար Կամացուկը, հետեաբար վստահօրէն մօտեցաւ երկու ընկերներուն:

(Շարունակելի)

ՆՈՐ ԲՈՒՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պօլսոյ Յոյներուն Պատրիարքարանին Խօսան ժողովը պաշտօնանկ ըրաւ Կոստանդիանոս Պատրիարքը: Դուր խօսեմութիւն համարեց այդ որսչուր վաւերացնել, վախճալով որ հակառակ պարագային Յոյներն ալ կը կատարին:

Պատրիարքին պաշտօնանկութեան պատճառն է Յունաց եկեղեցական իրաւունքներուն պաշտպանութեանը համար իր թող վարմունքը: Զրկով զանազան գանգաւաները սրոնք սեղանի յունական խնդիրներու կը վերաբերին, նկատողութեան կ'առնենք պարագայ մը որ թիրքիոյ ոչ-մահմետական բոլոր ժողովուրդները կը շահագրգռէ:

Թիրքիոյ մէջ իւրաքանչիւր ժողովուրդի Պատրիարքարանն է որ ծնունդի ու մահուան արձանագրութեանց տղամարները կը բանէ: Թիրքը գատարաններ ամուսնական եւ ժառանգական խնդիրներու մէջ Պատրիարքարանի մը կողմէն տրուած վկայականին վրայ յենով վճիռ կ'արձակեն: Հիմակ որոշուեր է օրինաւոր համարիլ նաև Ղատինքու և Ռուսթարներու վկայականներն այ, որով ահեղ զեղծութեան դուռ մը կը բացուի: Վերջերս քրիստոնեայ մը երկու սուտ վկայ տանելով, ու ձեռքն ալ Ղատիի մը վկայականը ունենալով ինքզինքը հարուստի մը զաւակը ճանչցնել տուեր է Շերիէն: Եւ որովհետև մահմետական օրէնքը ապօրէն զակին իրաւունքները կը ճանչնայ, ուստի և այդ սուտ-ապօրէնը ահակին բաժին մը կը ստանայ մեծնող քրիստոնէին ժառանգութենէն:

Հայերը և Յոյները բնականաբար տակնուվրայ եղած են, վասն զի մեր ընտանեկան կեանքը հիմէն կը բանդուի Պատրիարքարաններու վայելած առանձնաշնորհմանց ջնջումովը:

Յոյները որ հիմա Հայոց նախկին տեղը զբոսաւան իբր «հաւատարիմ ազգ», չէն վարանիր Պատրիարքներն տապալել: Իսկ մեք.— Յոյները Տատեան փաշա մը չունին:

ԱՊՏԻՒԼ ՀԱՄԻՏ

ՆԵՐՔԻՆ, ՄԱՐԴՆ ՈՒ ՆԵՐՔԻՆ ԿԵԱՆՔԸ

Պ. Ժորժ Տօփո, այս օրերո Բարից հրատարակուած սոյն վերնագրով հատորին հեղինակը, թէ որ ուրիշ բան ըրած չըլլար բայց եթէ միայն հրապարակել Ապտիլ Համիտի կենդանագիրը որ իր գրքին կողքը կը մթնցնէ, վրիժառու գատարագի անողոք ու արդինալի գործ մը կատարած պիտի ըլլար արդէն: Կարելի չէ, ո՛չ միայն մեզի համար ի հարկէ, այլ ո և է մարդու համար, նայուածք մը նետել այդ կենդանագրին վրայ և ոարտափէ ու նողկանքէ շփշաբաղիլ: Այդ դէմքին վրայ, ամէնէն թերեհաւատները իսկ մէկէն ի մէկ ու առանց ճիգի պիտի կարգան մարտիրոսացումը այն երկրին որ ահա քանդահինգ տարի է որ այդ հիւանդ հրէշին ճանկին տակ կը հեծէ ու կ'ոգեվարի: Ու այդ գլխուն ի աեռ, մարդ ի՞նչքան լաւ կ'ըմբոնէ որ սուլթանը մինչև հիմակ ամէն կերպով խուսափած ըլլայ ամէն կարելիութիւններէ որոնք իր զիմագծութիւնը լուսանկարի կամ պատկերի մը վրայ արձանացնելու առիթ կրնային ընծարել:

Պ. Տօփոսի Գիրքը նուիրուած է ամբողջ այդ կենդանագիրը բացատրելու, այդ դէմքին տակ որջացած հոգին զէպի լոյսը քաշկոտելու, անոր այբերուն մէջ գտարանակալ մտածումներն ու զգացումները քողամերկելու: Հեղինակը բարձր ընտանիքէ երիտասարդ Հիլլէն մըն է, որ, ինչպէս Պ. Բիէր-Քիլեառ կ'ըսէ գրքին յառաջաբանին մէջ, պատանութենէն խառնուած է Երլարգի շուրջը միտացող քաղաքական տարօրինակ աշխարհին, ու, գիտելու ու թափանցելու գերագանց յատկութիւններով օժտուած, կրցած է այսպէս մեզի տալ անհունապէս շահեկան պատմութիւնը թիրք բանակալին ներքին կեանքին: Իր յաջող ու ճարտար գրչին տակ, սուլթանը ու իր վարած կեանքը երևան կուգան իրենց ամբողջ արհաւիրքին ու պժգանքին մէջ,— իր գալափիլ հրէշութեանը մէջ ահաբեկող զողակար ու Վատ դահիճի կեանքին բոլոր մանրամասնութիւնները, որոնք սուրբութեան ամէն հրաշխաւորութիւն կը կրեն:

Պ. Տօփոսի ըրած գործը՝ օգտակար ու մարդկային գործ մըն է: Մեծ ծախքով ու ճարտարութեամբ տարածուած առօտպել մը, Երոպայի վարձկան մամուլին շնորհիւ, յաճախ սուլթանը կը ներկայացնէ իբր բարեմիտ վեհապետ մը, մեծանձնութեան, հեզութեան, բարեօրիութեան շիրքերով օժտուած: Պ. Տօփո հատորը ու անխնայ հարուած մը կուտայ այդ անարգ առաս-

պելին, հրապարակի վրայ մերկացնելով արինն ու խն-
լագորութեան էակը, ու անոր ճակատը առ յաւէտ խա-
րանելով անարգութեան անջնջելի նշանովը, որ պիտի մնայ
վաղուան Պատմութեանը համար:

Հատորին վրայ զազափար մը տալու համար լա-
ւագոյն բան մը չենք կրնար ընել բայց եթէ յաջորդաբար
այս սինակներուն մէջ թարգմանելով զըջին մէկ բանի
զլուինները:

Ա.

Յուլթանը շատ վաղայարոյց է. ամառ թէ ձմեռ,
առտուան չորսուկէսին հինգին ատենները կ'ելլէ, ու ան-
միջապէս վրան եկերարի մը առնելով, օն կաշիէ հողա-
թափներով կ'երթայ իր լոգարանը, որ յախճապակիով
ծածկուած պատերով տնչուց խուց մըն է: Իր լուացու-
թիւնը շատ նախնական է. պաղ ջրի մէկ բանի լուա-
ցում իրեն կը բաւեն, և հակիրճ մարզանքէ մը յետոյ
որ բարերար հակազգեցութիւնը բերելու համար հար-
կաւոր է, կ'անցնի իր աշխատութեան օննակը ուր
տաճկական խահուէ մը կը խմէ, զոր իր աչքին զիմաց
կը պատրաստէ իր Գահվէճի-պաշին կլի էֆէնտի. յն-
տոյ կը վաւէ առաջինը անհամար սիկառէթներուն զոր
անդազար կը ծխէ մինչեւ պառկիլը, և զորոնք ամէնքն
ալ աչքին գիմացը շինել կուտայ, միշտ թունաւորման
վախէն:

Թեթև աղբատէ մը յետոյ որ հակիրթ է և կաթնե-
ղէնէ կը բաղկանայ, Ապտիւ Համիա կը լծուի իր օս-
վորական գործին որուն կը նուիրէ իր գրեթէ ամբողջ
ժամանակը, — այն է ամէն կողմէ իր լրտեսներուն իրեն
հասցուցած տեղեկագիրներուն ընթերցումը. սովորա-
բար, իր վստահութիւնը վայելող ճաֆէր ազա ներ-
ջինին կամ իր առաջին թիկնապաճ Չերքէշ Մէհմէտ
փաշան է որ կուզայ ներկայ գտնուիլ այս իսկատիպ սուր-
հանդակին զատուցմանը:

Նստնապէտ աչքէ կ'անցընէ օտար մամուլին մէջ իր
վրայ կամ Պետութեան մասին երևցած յօդուածներուն
թարգմանութիւնը. նոթեր կ'առնէ որպէս զի հրահանգ-
ներ ապա ամբողջ Եւրոպայի մէջ ունեցած գործակալ-
ներուն և նշանակէ ձեռնարկները զորոնք ընելու են թշնամի
լրագիրներու մօտ:

Ժամը տասնին ատենները հաշի կը նստի, որ օր
վարարար բաւական պարզ է, յետոյ կ'ընդունի իր ա-
ռաջին քարաւորը Քահսին պէյ և սենեկապետները,
մտիկ կ'ընէ անոնց տեղեկագրերուն, հրամաններ կու-
տայ, և վերջապէս կը զբաղի Պետութեան գործերովը,
իւր առաջին քարաւորին պաշտօն առնով իր հրահանգ-
ները հազորգել նախարարներուն:

Նախարարները շատ քիչ անգամ կ'ընդունուին Սուլ-
թանէն:

Գալով իր Եւրոպայի գործերուն, շարաշար կ'աշխա-
տին. ամէնքն ալ, Երլտգի մէջ, ամէն գիշեր մինչեւ
շատ ուշ կը հսկեն եւ կարգաւ անքուն գիշերներ կ'ան-
ցընեն պալատը, որպէս զի իրենցսէ մին ամէն ժամու
պատրու օտ գտնուի Ն. Վեհափառութեան արամագրու-
թեանը ներքև:

Այդ պարօնները անհունապէս աւելի զբաղած են
սուլթանին անձն իսկ շահագրգոռ խնդիրներով բան
կայսրութեան գործերով: Մասնութիւնները կ'ընդունին
ու կը փոխանցեն, կասկածելի անձերը կը հարցաքննեն,
ժողովքի կը նստին այս ինչ կամ այն ինչ Երիտասարդ
թիւրքին պարագային վրայ խորհրդակցելու համար,
անգուլ թղթակցութեան մէջ են արտասահմանի օսման-
եան լրտեսներուն հետ, սուլթանին Բարիգի, Լոնտո-
նի, Ժընէվի կամ Գահիրէի գաղտնի գործակալներուն
հետ ազդերը կը բաւեն, և այլն: Իրենց ամբողջ աշխա-
տութիւնը, ի վերջոյ, սուլթանին ձեռքը կ'երթայ:

Ապտիւ Համիաի համար կ'ըսեն թէ աշխատասէր
մարդ մըն է. անշուշտ, անդազար կ'աշխատի, եւ գրեթէ
բնաւ պարապ ժամանակ չ'անցընէր. բայց բո՛ւն Պե-
տութեան գործերը ատոր մէկ ամենագոյն մասը մի-
այն կը գրաւեն. ատ է զլիւսուր պատճառներէն մին
որ, հակառակ վեհապետին ամենօրեայ վաստակին,
ընթացիկ գործերը ամիսներով և յաճախ տարիներով կը
ձգձգուին:

Գարօնէն մինչեւ աշուն, երբեմն ալ ձմեռը, սուլ-
թանը իր տիւհանգիտը կ'ընէ բազմոցի մը վրայ երկն-
ցած, իր ճեղքին մէջ պզտիկ խուցին մէջ. յետոյ նօ-
րէն կը սկսի աշխատիլ երկօւ երեք ժամ. այնուհետեւ,
բացի եթէ ստիպողական գործ մը ունենայ, կ'երթայ
օղ առնել իր յատուկ զարաօտանին մէջ: Իր պտոյտին
սահմանը տարուէ տարի երթալով կ'անձկանայ կօր,
այն աստիճան որ սուլթանը այսօր ալ իր բնակա-
րանէն չի հեռանար և լոկ անոր շորք բոլորքը ման
կուզայ, սոքերը բանալու համար: Մնաց օր, երկու
երեք պահակ իրեն կ'ընկերանան միշտ, ու առջեւէն
կը քալէ խառնածին Հասան փաշան, որուն վրայ բա-
ցարձակ վստահութիւն օւնի. այդ հաստատարի՞մ ծառա-
յին պաշտօնն է մէկգի ընել մարզկաթին ամէն արա-
րած, օր, գրեթէ անկարելի դիպուածով մը, վեհապետին
ձամբուն վրայ գտնուել:

Գարաօտանին մէջ իր երբեմնի երկար պտոյտներուն
միջոցին, Ապտիւ Համիա, օր իրը ճշմարիտ Արեւելի
խահուէն շատ կը սիրէ, ետեւէն կը տանէր իր Գահ-
վէճի-պաշին, օր շրթայի մը ծայրը մտնելով մը և հարկ
եղածը կը տանէր հեաը՝ վայրկեանին պատրաստելու
համար կայսերական ըմպիւս ճոյքին յաճախ պահանջած

մոքայի պատիկ գաւաթը :

Այդ թուականին, Ապտիւլ Համիտ յաճախ ձի կը նստէր : Այս վերջին տարիներս, զգուշութեան զանազան պատճառներով, մէկդի թողած է հեծելութիւնը, ինչպէս նաև թիաւարութիւնը՝ իր բնակարանին մօտ գտնուած ընկն վրայ :

Մարզանք մը որուն համար սուլթանը մասնաւոր նախասիրութիւն մը ունի և զոր պատանեկութենէն սկսած ու անգուշ շարունակած է իր զահակալութենէն ի վեր, նշանաւորութիւնն է : Ատոր մէջ իր ճարտարութիւնը այնքան մեծ է որ—տեսնող եղած է— իր բեմովերին գնտակներովը անունը գրած է թանձրհինգ քայլ հեռուն տախտակի մը վրայ, եւ, այդ հեռաւորութենէն, օգր նետուած նարինջներ զարկած է առանց մէկ հատը վրիպելու :

Երբեմն նաև, այդ պարագայ ժամերուն, փատիշահը հարէմը կ'երթայ, ուր գաւաթ մը օղի կը խմէ, մինչ հեշտաբար ձայն մը արեւելեան զանգաղ երգ մը կ'երգէ : Ահելի յաճախ, իր արհեստանոցը կը բաշտի, ուր ժամագործութեամբ, յախճապակիի շինութեամբ, նոյն խկ նկարչութեամբ, և քիմիական տարրալուծումներով կը զբաղի, որովհետև, իր կանխահոգակ ինքնակալ, ուղած է իրեն կասկածելի երեցած բմպելիքներովը ինքն իւր քննելու կարողութիւնը ունենալ : Երիտասարդութեանը շատ աղէկ ատաղձագործ էր, և, զեռ լճէնտի եղած ասանը, իր ձեռքովը բանած է իր ֆէատհանէի ճեշկին մէկ սենեակին փայտեղէն ջանդակները որոնք արկար հպարտութիւն մը կը պատճառեն իրեն :

Ամառը ճիւղ և ձմեռը հին ատեններն է որ կը տրուի կայսերական ընթերթը, որուն իրարանցումն ու պատկառարկու հանդիսաւորութիւնը հակապատկեր կը կազմեն ճաշացանկին պարզութեանը հետ :

Ի նկատ առնելով սուլթանին բնաւորութիւնը, իր ճաշին ինչորդ պետական հարցի մը կարեւորութիւնը ունենալու էր : Ապտիւլ Համիտ մուծկալ է, բայց կասկածու :

Ըսենք նախ թէ Ն. Վեհափառութեան անձնական խոհանոցը բոլորովին զատ է պալատին խոհանոցէն : Սուլթանաթ-Գարուսու կաշուած մեծ գրան աջ կողմը, պատին դէմը պղտըտիկ խօց մը կայ երկաթեայ վանդակներով, զբահապատ գոնով — ճշմարիտ գրամարկը մը— որ յատկապէս նուիրուած է Հաւատացեալներու Հրամանատարին բերնին աւհմանուած կերակուրներուն պատրաստութեանը : Հօն է որ իր յատուկ խոհարարը կ'աշխատի, աշուրջ հեղուցութեանները ֆիլէրճի-Պաշի Օսման պկին, որ Երբեք մեծնէ կարեօր պաշտօնակալներէն մին է, քանի որ Փատիշահին առօրէութիւնը, կեանքն իւր իր ձեռքն է : Այս վերջին ժամանակներս, կ'ըսեն, երկրորդ ֆիլէրճի Հիւսէյն լճէնտի Օսման պկին անզը անցած է. սուլթանը ա՛յ զօտահոլութիւն չունի այս

վերջնին, որ, կ'ըսեն, ձեւի համար միայն կը պահէ իր բարձր պաշտօնը :

Երբարգ մտնող ելլող անձերը ամէն օր ժամը 10ին և իրիկուան ժամը հին տարօրինակ արտօրոգութեան մը հանդիսատես կ'ըլլան : Ալաթուրքս սէթրի հարած երկու մարդ սրբատուփի մը պէս կը տանին պատիկ սեղան մը որ կայսերամը մը ծածկուած է եւ որուն վրայ կը գտնուի կայսերական սպասը : Ետեկն կուգայ ոտնկայ մը որ կը տանի սուլթանին համար պատրաստուած կերակուրներով լեցուն մեծ ափսէ մը, որ ծածկուած է սեւ կերպասով մը որուն ծայրերը մէկտեղ բերուած և կնքուած են ֆիլէրճիին կնիքով : Ետեկն կը բալէ սպասեակ մը որ հացի կողովը կը տանի, ու ասոր աջ ետեկն հինգերորդ մը որ հոգեւին բոնած է ջրի սրուակ մը նմանապէս կնքուած կարմիր պատեանի մը մէջ փակուած :

Կը հաւատեն թէ Ապտիւլ Համիտ ֆէատհանէի ջուր միայն կը խմէ, յորմէհետէ Սաֆիգայ գնչուն իրեն գուշակեց թէ զահը պիտի ելլէր պայմանաւ որ այդ ջրէն միայն խմէր : Գահը բարձրանալուն, սուլթանը վարձատրեց գուշակը զոր քովը պահեց, եւ անոր աղջիկը իր հարէմը առաւ :

Պատկառարկու թափօրին անցքին վրայ, բոլոր դէմը ելլողները կանգ կ'առնեն ու ամենախորին յարգանքի նշաններով կը խոնարհին : Սուլթանին անձնական բընակարանին պատիկ դուռը, ուր ոտնկաներ կը սպասեն, կը բացուի անոր առջեւ : կայսերական սեղանը կ'ընդօսուի ֆիլէրճիին, որ կնիքները կը խզէ Ն. Վեհափառութեան աչքին առջեւ եւ անոր կը մատուցանէ կերակուրները :

Ապտիւլ Համիտ գրեթէ միշտ մինակ կ'աւտ, ու իր ճաշը մէկ քանի վայրկեան կը տեւէ : Հագի կը դպի կերակուրներուն և թեացածը այս ինչ կամ այն ինչ գրանիկին կը զրկէ : Ահելորդ է բոշ որ սուլթանին չորս կողմը գտնուող մարդերուն մէջ, կայսերական սեղանին ձգելցուկները ընդունելու պատիւը՝ ամէնէն աւելի գնահատուած շնորհներէն մին կը կազմէ : Երբեմն, բանակալը, յանկարծածին կառկած է մը բանուած, ֆիլէրճիին կը հրամայէ ճաշակել հրաւրուած պնակէն, կերակուրն յաջողած չըլլալը անոր հաստատել տալու պատրուակով, բայց իրօք ապահով ըլլալու իսմար կերակուրին անվառութեանը : Նոյնպէս, շուներ ու կատուներ կ'առնէ քովը, որոնք երբեմն երբեմն իր կերակուրներէն պատաններ կը բաժնէ՝ օւտելէ առաջ :

Ամէն ճշմարիտ Արեւելցի պէս, սուլթանը Բիլաֆը կը սիրէ, նոյնպէս կ'ախորժի օշիւարի սաքէ. անուշեղէնի շատ զրուի չունի : Բայց մասնաւոր նախասիրութիւն մը ունի հաւկիթին համար, որ Թունաւորուելու ամէնէն սուազ ենթակայ սուսնը կը կազմէ, եւ հաթին համար : Փատիշահին խմած կաթը Երբարգ տիպար ագառակէն կուգայ, ուր աշխարհիս ամէնէն ընտիր կովերը

կը գտնուին: Ապտիւ Համիտի այդ անուշ ստնտունները տարին ի բուն ուրիշ բան չեն ուտեր բայց եթէ Փոքր-Ասիոյ նահանգներէն յատկապէս բերել տուած ամէնէն լաւ տանձերն ու խնձորները:

Մէկ խօսքով, Ապտիւ Համիտ հեշտասէր կեանք մը չ'անցընէր, ո՛չ թէ ատոր խառնուածքը շունենալուն, այլ պարզապէս իր առողջութեանը օգտին համար, որուն վրայ մեծ ուշադրութեամբ կը հոկէ: Ստամոքսէն ու աղիքներէն կը նեղուի, և ախար անշուշտ պիտի ծանրանար եթէ խիստ գրութեամբ մը անոր գէմ չկուէր: Այդ հիւանդութեան պատրուակումն է որ սուլթանը կ'արդարացնէ ճոնեաքի պզտիկ գաւաթը կամ շամբանեայի գաւաթը զոր մերթ ընդ մերթ կը խմէ, թէպէտ իր կրօնքը կ'արգիւէ ատիկա: Այքով տը Ռիքլէս և Գոյա կը գործածէ, իբր կազուրիչ: Նշանաւոր հիւր մը կամ զեսպան մը ընդունելէ առաջ, սովորութիւն ըրած է բաժակ մը բոնչ խմել, երեսը գոն պալու համար: Հասկնալի պշրոտութեամբ մը, Հիւանդ Մարզը արդարեւ շատ կը բազձայ որ թարմ, սթափ ու քաջառողջ երենայ օտարականներուն աչքին:

Ընթրիքէն յետոյ, Ապտիւ Համիտ լրտեսութեան տեղեկագիրներու ընթերցումը կը վերսկսի, ու ատոնց մէջտեղը, երբոր քէֆը տեղն է, միմո մը կանչել կուտայ: Ամէնէն աւելի զինքը զբօսցնել կըցողներէն մին մեռած Բէատահանէ Իմամը Ալի էֆէնտին էր. սուլթանը զանի ջուրը կը նետէր, երեսը մուրով մալակոնել կուտար, ու այս կարգի հազար խաղեր կը խաղար գլխուն: Ալի անտրտունչ կը հաւանէր ամէն բանի, զիտնայով որ այս ամէն նուաստացումներուն պիտի հասեկին առաւել կամ նուազ առատ պաղչիչներ:

Երբեմն կայսերական կատակները կոշտ ու գոհհիկ ձեւ մը կ'անեն, որ բոլորովին անհամաձայն է վեհապետի մը ծանրութեանը մասին ընդհանրապէս կազմուած գաղափարին: Ուստի նախամեծար կը համարինք մուլին մէջ թողուլ կայսերական այդ զուարճութիւնները, առանց իսկ յիշելու հանրամասնօթ պատմութիւնը այս բընական գառնահամ ըմպելիքին զոր Նատիր աղա, Ն. Վեհափառութեան աչքին զիմաց, այդ խեղճ Ալի էֆէնտինն հրամցուց:

Բայց սուլթանը բարեբաղգաբար, ուրիշ աւելի նուրբ զբօսանքներ ունի: Կը սիրէ ներկայացումները, անոնց մէջ զարտուղում մը գտնելով իր բազմաթիւ մտահոգութիւններէն, մշտնջենական վախերէն, եւ յաճախ ներկայ կը գտնուի թատերական ներկայացումներուն, նուագահանդէսներուն, սինէմաթօկրաֆի և ֆոնտիլրաֆի ցոյցերուն որոնք կը տրուին իր Երլտըզի մասնաւոր թատրոնին մէջ: Այդ թատրոնը, որ կայսերական քեօշկին կից է, բաւական նեղ ու անշուք երեսովով շէնք մըն է, հին, ախարի մը տեղին վրայ կ'առուցուած: Եթէ ու խումբ սենի, թիւրք խումբ մը կատակերգութեան համար, և օբերայի

ու օբերէյի եւրօպական խումբ մը՝ ամէն երկրի վերառաններէ կազմուած: Հետաքրքրական է զիտնալ թէ այդ խումբերուն մէջ երկու երեք կին միայն կայ, ու ծպտուած էրիկ մարդիկ են որ կը կատարեն կանանց գերերուն մեծ մասը: Պալատին պատկանող այս երկու խումբէն գատ, Կ. Պոլսէն անցնող օտար զերասանները գրեթէ առանց բացառութեան սուլթանէն կը հրաւիրուին ներկայացում մը տալու Երլտըզը:

Սովորաբար, սուլթանը պատուանշաններ կուտայ զըլխաւոր զերասաններուն և, —բայց ասիկա շատ շուտահիւր — գահաբեղէններ՝ հոշակաւոր զերասանուհիներուն: Հակառակ այս պոռտական ընդունելութեան, օտար զերասանները ընդհանրապէս անհասոյ տգաւորութիւն մը կը պահեն պալատը տուած ներկայացումներէն: Լայտով շողշողուն և ոգեւոր ու հաղորդասէր հասարակութեան մը լեցուն թատերասրահներու վարժուած ըլլալով, Երլտըզի գրեթէ դատարկ, կէս մուլի մէջ ընկղմած, եւ գերեզմանի մը պէս տրտում ու լուռ սրահը տարօրինակ ներգործութիւն մը կ'ընէ իրենց վրայ: Ապտիւ Համիտ, տեղ մը մութ օթեակի մը խորը պահուրտած, իրենց աչքին անտեսանելի, հանդիսապէս կ'ըլլայ ներկայացմանը առանց կեանքի նշան մը տալու, և վարագոյրը իջնելէն ետքն է որ սենեկապետ մը, վեհապետին կողմէն, կ'երթայ զերասաններուն հաղորդել մէկ քանի զրուատական հասարակ խօսք:

Կայսերական ընտանիքին անդամներէն գատ, շատ քիչ են առանձնաշարհեայները որոնց տրուած է հանդիսատես ըլլալ այդ ներկայացումներուն: —մէկ կամ երկու իշխան, մէկ քանի իշխանուհի ու պալատական կին իրենց ներքիններուն հետ, երկու երեք պալատական, երբեմն ալ «աչքը կող» նախարար մը ամբողջ հասարակութիւնը կը կազմեն:

Մերթ ընդ մերթ, բայց շատ քիչ անգամ, օտար զեսպան մը կը հրաւիրուի ներկայ գտնուելու, և սուլթանին մասնաւոր բարեացակամութեան այս հաւաստիքը շատ մեկնութեան առարկայ կ'ըլլայ միշտ: Յատկանշանական պարագայ մըն է որ տեղական մամուլին խստիւ արգիւում է յիշել Երլտըզը տրուած թատերական ներկայացում մը կամ նուագահանդէս մը: Ապտիւ Համիտ շուզեր որ իր ժողովուրդը զիտնայ թէ Արքան կը զբօսնու:

Նուագահանդէսի խօսք բրինք: Ըսենք այս առթիւ թէ սուլթանը, որ պատանեկութեանը երաժշտութիւնը սսած է համառօտակի, մէկ քանի թեթեւ եղանակներ կը կուտակէ զաշնակի վրայ, եւ շատ կ'ախորժի ինչ ինչ օբերաներէ, ինչպէս Թրապիստան, Թրօվաքօրէն և Ֆօսթը: Պզտիկ երգերն ալ հաճելի են իրեն. բայց երբեք կըցած չէ բան մը հասկնալ զառական երաժշտութիւնէն, և զայն անգեղ անուանած է առաջին անգամ որ մեծ կտոր մը իմանալու առիթը սենցած է:

Երաժշտութեան զուտը գոցելէ առաջ, պատմենք Ն. Վեհափառութեան համար ահանելի պատիկ պատահար մը, որ Երլտրզի թատերաբեմին վրայ տեղի ունեցաւ Գերասաններու խումբ մը Վոտվիլ մը կը կրկնէր. զոր նոյն իրիկունը իոկ ուղլթտին առջեւ պիտի ներկայացնէր. Տիւսաբ փաշա, նախկին երաժշտապետը, կը վարէր նըւազախումբը՝ զերասանապետին հրահանգներուն համաձայն: Պահ մը, այս վերջինը երաժիշաներէն խնդրեց սև է քայլերդ մը: Ասոնց բերնուց զիտցած միակ քայլերդը Համիտիէ քայլերդը ըլլալով, անմիջապէս սկսան զարնել զայն: Բայց, զիպուածին մէկ հեկնութեամբը, ճիշտ այդ պահուն էջ մը պէտք է թատերաբեմը պար, եւ իրօք ալ երեցաւ, կայսերական քայլերդին հանդիտուոր խաղերուն մէջանդ, մինչ ներկաները հազիւ կրնային զսպել իրենց խնդուքը: Այս էապէս գաւեշտական միջադէպը շարամտօրէն հաղորդուեցաւ Ն. Վեհափառութեան, ու հետևանքը եղաւ խեղճ Տիւսաբ փաշային պաշտօնանկութիւնը, որուն հրամայուեցաւ մէյ մըն ալ սուլթանին աչքին շերննալ:

Ապտիւլ Համիտի բաւական յաճախ պատահած է այս կարգի պզտիկ անխորժութիւններու ենթակայ ըլլալ: Ուրիշ անգամ մը, Ֆրանսացի անպարար մը, Պ. Ն., արտօնութիւն օտացաւ ներկայացում մը տալու պալատը: Սուլթանը իրեն հարցուց թէ ի՞նչ էր իր մասնագիտութիւնը, եւ Պ. Ն. պատասխանեց թէ Եւրոպայի գլխաւոր վեհապետներուն նմանութիւնը կ'ընէր: Արդարեւ, Չարին, Գերմանիոյ կայսեր, Չրանց-Եոզէֆի նմանութիւնը բրաւ, շատ աաղանգով, առանց յաշոյղելու խնդացնել Ապտիւլ Համիտը որ մէկէն ի մէկ զաղրեցնել տուաւ ներկայացումը: Մէկ քանի օր յետոյ, սենեկապետ Արիֆ պէյ, մանրական երեկոյթի մը մէջ մէկ քանի բարեկամ զըւարճացնել ուզելով, անպարարը հրաւիրած էր ներկայացում մը տալու իր աունը. արուեստագէտը, կարծելով հանելի անակնկալ մը ընել ներկաներուն, իր նմանութեանց շարքը աւարանց հաւատարմօրէն նմանցնելով Ապտիւլ Համիտի որբազան անձը: Եղելութիւնը հետեւեալ օրը Ն. Վեհափառութեան ահանջը հասաւ, որ, օտարի բարկացած, Արիֆ պէյը վերէն վար լուաց, եւ խոչորիկէլ զումար մը վճարել տուաւ Պ. Ն. ի՛ պայմանաւ որ անմիջապէս մեկնի Կայսրութեան մայրաքաղաքէն:

Ժ. ՏԱՌԻՍ

(Շարունակելի)

ՆՈՐ ՆՐԱԻԷՐԸ

Տաճառ Մահմուտ փաշայի երկու զաւակները օսմանեան հպատակ բոլոր ցեղերուն (Յոյները զուրս ձրգելով միայն) հրաւէր մը ուղղեցին, որպէս զի միանանք և Համաժողովի մը միջոցաւ խորհինք թիւրքիոյ՝ իբր հասարակաց հայրենիքի՝ փրկութեանը:

Հայկական դատին ջերմ բարեկամ Բրօ Արմենիա այդ հրաւէրին մեր կողմէն սիրալիր ընդունելութեան մը փափաքող կը թուի: Իրաւ է որ Պ. Քիլեառ մեզի կը թողու որոշումի մը յանգիլ ազատօրէն, բայց ահաւնջուա ալ կը կաթեցնէ թէ «ամէն անոնք որոնց վրայ ճնշեալները (Հայերը) յոյսերնին զրած էին, ամէնքն ալ զիրենք հետզհետէ մատնեցին: Անգլիա, Չրանսա, Ռուսիա, հանրապետութիւնները, միապետութիւնները, ինքնահեծանները զիրենք կ'մ իրենց շուառ բաղդին կը լքանեն, կ'մ Ապտիւլ Համիտի մեղսակիցները կը դաննան:»

Հայասեր հրապարակագիրը կը յիշեցնէ Հայաստանի արդի տառապանքները որ հայ ժողովուրդը կը մղէ մինչեւ վերջնական կոտորածի մը ըզձանքին: «Օշտակար են այն բուր միջոցները որոնք զէպի կեանք կ'առաջնորդեն, կամ զէպի կեանք կը վերադարձնեն: Հակառակ 1894-96ի ահաբհու արիւնահոսութեան, ցեղը տակաւին պէտք եղածին շափ բազմաթիւ եւ զօրեղ է, ուստի հաշուի պիտի առնուի թէ՛ թիւրք կայսրութեան լուծման, թէ՛ անոր հիմնովին վերանորոգման պարագաներուն» կ'ըսէ:

Այս նկատուութիւններով Բրօ Արմենիա օգտակար կը համարի մեր կողմէն յօժարակամ արտօմադրութիւն մը անենել զէպի սուլթան Մէճիտի թոռներուն կողք «որ շատ վեհանձն անկեղծութեան նշանները կը կրէ: Այդ առաջարկը ընդունելէ կամ մերժելէ առաջ Հայերը անշուշտ իրենց իրենց պիտի հարցնեն որ արգեօք իրենց ազգին վիճակը կրնայ աւելի վատթարանալ. եւ ո եւ է փոփոխութիւն հիմակուան կարգուսարքէն լուազոյն համարելու չէ՛:»

Մեզի անկեղծօրէն բարեկամ թերթի մը այս նկատութիւններն ալ հայ ժողովրդին ներկայացնելով, կ'ըսենք թէ՛ մենք եւս, որ այդ հրաւէրը օտացած ենք; պատասխանին համար անպարանքի պէտք չենք զգար, ինչ ինչ գտանաւներով, օրոնց մէջ առաջին անգը կը զբաւէ Տաճառ Մահմուտ փաշայի վարժունքը:

Այդ կողը հրատարակուելէն ըիջ ետքը Հեազգիրները հազարեցին թէ Տաճառ Մահմուտ փաշա Կ. Պոլիս էր վերադարձը փրկացնելու համար սուլթանին հետ բանակցութեան մասն է թափվին միջնորդութեամբը: Համաձայնութեան պայմանները մեզի անմանօթ կը թան,

բայց օրաթերթերը կ'ըսեն թէ քեռայրին ու աներձագին միջեւ ամէն զժուարուծուն հարթուած են: Սուլթանին մէկ պահանջուած է միայն որ Մահմուտփաշան զիտ Եղիպտոս կը կեցնէ: Երբտգէն կը պահանջուի Տամատին երկու զաւակներուն ալ ընկերացուծը իրենց հօր զէպի Վոսփոր: Փաշան կը վարանի հատատական պատասխան մը տալու: Բայց պիտի չի տա՛յ: Ո՞վ հակառակը պնդելու կը համարձակի:

Մահմուտ փաշա երբ Էրոպա եկաւ, բազմաշառաչ հրատարակութիւններով ծանուց թէ Թիւրքիա իր վերագարձը երկրին վարչական դրուեան հիմնական բարեփոխումէն կ'ստուծ ունի: Ու աշխարհի ներկայացուց նոր կազմակերպութեան մը շափաւոր ծրագիրը: Հիմ սկ հարկ է նախ գիտնալ թէ Տամատական ծրագիրը ամբողջովին կամ մասամբ ընդունուած է կամ ոչ: Եթէ սուլթանը իր քեռայրին քաղաքական պահանջուածները իւրացուցած է և զանոնց պիտի գործադրէ, պատճառ մը չենք տեսներ որ վերանորոգութիւններու ախոյեանին զաւակները շարունակեն զիտ Էրոպա թափառել: Իրենց ալ, ու իրենց հետ ալ բոլոր Երիտասարդ Թիւրքերը ալ ևս առանց անպատեհութեան կրնան երկիր վերադառնալ: Բայց եթէ սուլթանը քաղաքական ու և է պայման մերժած է, ինչ շարժումի իր մղէ փախստականը նորէն երթալ Երբտգէն ինչալ:

Քանի որ քաղաքական ու և է բարենորոգումի խօսքը չլսուիր, իրաւունք ունինք հատուաբար թէ դրամական հարկն է որ Տամատ Մահմուտ փաշան զէպի Պոլիո կը բռնէ: Բայց փախստական հայրը կուզէ իր զաւակները Էրոպա թողուլ ու և է պատահականութեան համար իր ապահովութիւն: Որքան ատեն որ այդ երկու երիտասարդները Թիւրքիա չեն վերադառնար, հայրենին անդին հանգստաւէտ կեանքի մը դիրութիւնները կրնայ մայրել, մինչեւ իր անցեալին մոռացուծը: Եւ տարակոյտ չունենանք թէ երկու երիտասարդներն ալ իրենց հայրը սուլթանին ձեռքը պատանդ տալով, բնականաբար իրենց մօրեղբօրը անհաճոյ դիրքի մէջ գտնուելէ պիտի զգուշանան:

Հեռագիրը վերջին պահուն կը հաղորդէ թէ Պոլսոյ քեռայրին միջեւ բանակցութիւնները խզուեր են: Բայց պիտի չվերսկսին: Դրամական ապահովութիւնը չպարտաւորէ արգիտք Մահմուտ փաշան զաւակներն ալ մէկ տեղ արած «պահ ես եւ մանկունք իմ» բռնելով սուլթանին գիրը նետուիլ:

Թիւրքիոյ կործանումին փափաքող չենք, այլ հիմնական բարեկարգումին, սակայն Երիտասարդ Թիւրքերու կղզակցութիւնը իր ամբողջութեամբ մէջ տակաւին ոչ անշահախնդիր քաղաքական խաբրենափոքութեան հաւատարմները ընծայեց, և ոչ ալ բարենորոգութիւններու խընդիրը լայն մաքով բժշկեց, կը փափաքէր որ Ֆրանսացի մեր բարեկամները այս նկատումները չվրիպեն իրենց սւշադրութենէն:

ԼՈՒՐԵՐ

ՄՈՒՇԻ տ'ընայան իշխանաշրջանը Հայոց ասալ-նորդին բռնաբերքը գրասած էր. ասոնց մէջէն ցոցակ մը ելած է ֆաղաքական ժողովի անդամակցութեան ընտրելիներու անունները պարունակող: Յաջակիւն մեղնշանակուած անձերը ամէնքն ալ բանտարկուեր են, իրր յեղափոխականներ:

ԱՐՏԱՍԻՆՎՈՒՆԻ ձայ օրագրութիւնը հետզհետէ սկստարցնելու եւ ջնջելու համար Բարիգի օսմանեան ղեւպան Միւնիս պէյ նոր դրուեան մը աշխատելու համաձայնաշրջան գոյացուցած է Երբտգէն հետ: Չենք կրնար վախենալ թէ այս անգամ յաջողին:

ԵՐԼՏՁԸ Էրոպայի պետութեանց դիմումները ըրած է որպէս զի իրենց հողերուն վրայ ապաստանած Երիտասարդ Թիւրքերը օսմանեան իշխանութեան յանձնուին: Այս փորձերը անշուշտ ապարդիւն պիտի մնան:

ԲԱՐԻՉԻ Հայոց Բարեգործական Ընկերութիւնը մարտ 23ին նոսազանեղէս մը տոնու, որուն անմիջապէս յաջորդեց պարանաեղէս մը: Երկուքն ալ շատ յաջող անցան: Նոսազանեղէսի բաժնին իրենց աշակցութիւնը թերւած էին Մուսէ Սիւլի և տիկին Սրկոն-Վէպո, որունք արտասանութեանները ըրին Միւսէն և Հիւկոյին: Կէ կարծես թէ 2000 ֆրանքի մօտ հասալը մը գոյացած է:

ՊԱՏ. ԲԻԿՍԻ քաներէն չորսը այսօր իրր միսիոնար կ'աշխատին Թիւրքիոյ մէջ: Իր աղջիկը տիկին Թրօպիա երկար տարիներ կ'անանց համար աշխատած է Կ. Պոլիս և Ալեքսապ. իր մէկ որդին՝ Պատ. Էտառքոսօֆիկս՝ Մարգոսակի աստուածաբանական վարժարանը կ'աշխատի և մէկ ուրիշ զբօնն ալ՝ Պատ. Ճէյմս Բիկոս՝ Ալեքսապի գաղղէնը աշխատած է:

ՀԱՍՏԵՆ ԵՒ ԲԱՍՆԵԿԱՆ

ՆՈՐ ԿԵՂՆԻՔ կը հրատարակուի ամէն ամիս 1 Թ եւ 1 Յին: Բաժնեգիրն է Էրոպայի համար տարեկան 10 եւ վեցամեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամեայ 1 տոլար:

ՆՈՐ ԿԵՂՆԻՔ վերաբերեալ նամակ ու բաժնեգիր գրել ա՛:

L. FRANK,
27, CHESTERTON ROAD,
(ENGLAND) LONDON, W